# ԼՈՒՍ ԶՈՒՂԱՄ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՍԱԼԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԺԲ ՏԱՐԻ, ԹԻՎ 102, ՍԱՅԻՍ-ՅՈՒԼԻՍ 2014

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 19-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Կիրակի՝ 2014 թւականի յունիսի 29-ին, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցում մատուցած Ս. Պատարագի ընթացքում, որին նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, տեղի ունեցաւ Հայրապետական մաղթանք, Մեծի Տանն Կիլիկիոյ արժանաւոր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 19-րդ տարեդարձի առիթով:

Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ, որի ընթացքում հոգեւորականաց դասը աւետարանական հատուածներ ընթերցեց, եւ աղօթքներ կարդաց, աստուածահաճոյ ծառայութիւն եւ երկար կեանք մաղթելով Վեհափառ Հայրապետին եւ անսասանութիւն՝ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսական սուրբ աթոռին:

Առաջնորդ Սրբազան Հայրը Հայրապետական մաղթանքից յետոյ, իր քարոզի մէջ, բնաբան ունենալով աւետարանական այն հատուածը, որտեղ Քրիստոսը խօսում է «Քաջ Հովիւ»-ի մասին, անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի նուիրեալ ծառայութեան բազում երեսներին, քաջ հովւապետի պատկերի մէջ: Նա Սպահանի Հայոց Թեմի ազգային իշխանութեան, հոգեւորականաց դասի, եկեղեցու սպասաւորների եւ Թեմի ողջ ժողովրդի անունից արեւշատութիւն մաղթեց Վեհափառ Հայրապետին եւ շնորհաւորեց նրան իր 19-ամեայ աստուածահաճոյ հովւապետական ծառայութեան առթիւ:

Առաջնորդ Սրբազան Հայրը, հակիրճ կերպով խօսելով Վեհափառ Հայրապետի բազմատեսակ գործունէութեան մասին, յատուկ կերպով շեշտեց, որ նրա շնորհիւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին միջազգային զանազան ատեաններում ուշադրութեան կենտրոն է հանդիսացել եւ իր արժանիքներն է ի սպաս դրել ո՛չ միայն հայութեան, այլ համայն քրիստոնեայ աշխարհի հոգեւոր եւ բարոյական արժէքների պահպանման ու զարգացման նուիրական աշխատանքում:

Ս. Պատարագից յետոյ, հիւրասիրութիւն կատարուեց եկեղեցուն կից սրահում եւ աւարտին, Սրբազան Հօր խօսքից յետոյ, երգուեցին «Կիլիկիա» եւ «Ի վեհ բարձանց» երգերը:

## «ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՕՐԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «Ս. ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՅԻ» ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 350-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

*«...Նոր Ջուղա անւանումն արդէն յուշում է, որ գործ ունենք դարեր շարունակ հայապահպանութեան բացառիկ կառուցակարգեր մշակած, հայն ու հայեցին անաղարտ պահած մի հգօր եւ ինքնահաստատուած համայնքի հետ... Նոր-Ջուղայեցին իր համայնքային կեանքի կազմակերպումը սկսեց եկեղեցիների եւ դպրոցների հիմնադրմամբ, առաջնորդուելով այն գիտակցութեամբ, որ հաւատի ու կրթութեան իւրայատուկ այդ դարբնոցները հայ ազգային կեանքի, հայկականութեան յարատեւութեան կարեւոր հիմնասիւներից են։ «Նոր Ջուղայի օրեր» ծրագրի իրականացումն առիթ է եւս մէկ անգամ նշանաւորելու Նոր Ջուղան՝ որպէս ազգային մշակոյթի պահպանման կարեւորագոյն կենտրոնի»*:

Հ.Հ. Սփիւռքի նախարար՝ տկն. Հրանուշ Յակոբեանի հնչեցրած այս բնաբանով բացումը կատարուեց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցու հիմնադրութեան 350-ամեակին նուիրուած «Նոր Ջուղայի օրեր» ծրագրի, որը նախաձեռնել էր Սփիւռքի նախարարութիւնը եւ որին իրենց համագործակցութիւնն էին բերել Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդը եւ Երեւանի «Մեսրոպ Մաշտոցի» անուան մատենադարանը:

Ծրագրի մեկնարկը տրուեց 2014 թուականի մայիսի 21-ին, իրանահայ երգահանների ստեղծագործութիւններին նուիրուած համերգով: Գաֆեսճեան արուեստի կենտրոնում Աննա Մայիլեանի եւ Արմէն Մկոյեանի կատարմամբ հնչեցին Նիկոլ Գալանտերեանի, Վարուժան Պարթեւեանի, Համբարձում Գրիգորեանի վոկալ ստեղծագործութիւնները:

Այս ծրագրի շրջագծում, 23 մայիս 2014 թուականին Հ.Հ. Սփիւռքի նախարարութիւնում տեղի ունեցաւ Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան պատուէրով հրատարակուած Իրանում Հ.Հ. առաջին դեսպան Վահան Բայբուրդեանի «Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ» եւ Յովհաննէս Զատիկեանի «Կարինի նահանգը 19-րդ դարի երկրորդ կէսին» գրքերի շնորհանդէսը:

Նոյն օրը երեկոյեան «Մեսրոպ Մաշտոցի» անուան մատենադարանում տեղի ունեցաւ Նոր Ջուղայի ձեռագիր մատեաններին նուիրուած ցուցահանդէսի բացման արարողութիւնը, այնուհետեւ տեղի ունեցաւ գիտաժողով նուիրուած իրանահայութեան կեանքում Ն.Ջ. Ս. Ամենափրկչեան Վանքի եկեղեցու դերին, որի ընթացքում ներկայացուեցին հետեւեալ զեկոյցները՝

- Իրանի մշակութային եւ տնտեսական կեանքում իրանահայերի թողած մեծ աւանդը՝ Հ.Հ.-ում Ի.Ի.Հ. դեսպան Մոհամմադ Ռեյիսի
- ԻԻ.Ն.Ե.Ս.Կ.Օ.-ում Ս.Ա. Վանքի գրանցման գործընթացը՝ Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի տնօրէն Շերլի Աւետեան

- Ս.Ա. Վանքի եկեղեցու որմնանկարներն ու զարդանախշերը եւ դրանց վերանորոգումը՝ որմանկարների վերանորոգող Անի Բաբայեան

- Սեֆեւեան շրջանում հայ եկեղեցու իրաւունքների պահպանման ուղղութեամբ Խոջաների եւ ազդեցիկ հայերի դերակատարութիւնը՝ Մատենադարանի աւագ գիտաշխատող Քրիստինէ Կոստիկեան

- Նոր Ջուղայի եւ խոջայական ապարանքների մանրանկարչութիւնը՝ Իրանական մշակոյթի գծով փորձագէտ Աւօ Յովհաննիսեան

- Նոր Ջուղայի դերը եւ համազգային նշանակութիւնը կրթութեան, գիտութեան, արուեստի եւ քաղաքակրթութեան զարգացման գործում՝ Ի.Ի.Հ.-ում Հ.Հ.-ի առաջին դեսպան՝ Վահան Բայբուրդեան

Երեւանում անցկացող «Նոր Ջուղայի» օրեր ծրագիրը եզրափակուեց մայիսի 24-ին Երեւանի Առնօ Բաբաջանեան համերգասրահում կազմակերպած մշակութային միջոցառումներով:

Ծրագրում նախ ելոյթով հանդէս եկաւ «Կոմիտաս» երգչախումբը Արմէն Ամիրխանեանի գլխաւորութեամբ, որի ընթացքին հնչեցին հայ նշանաւոր կոմպոզիտորների ստեղծագործութիւնները:

Երգչախմբային կատարումներն ընդմիջուեցին Անանա Մայիլեանի եւ Գոռ Ամիրխանեանի գեղեցիկ մենակատարումներով: Ապա ներկաներն առիթ ունեցան վայելելու Ռուբէն Գէորգեանցի «Նոր Ջուղա, լինել» ֆիլմը նուիրուած Նոր Ջուղայի հայ համայնքին եւ նրա պատմութեանը:

Ելոյթներով հանդէս եկան Հ.Հ. Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը, Ի.Ի.Հ. դեսպան Մոհամմադ Ռեհսին, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Հրանդ Մարգարեանը, իսկ երեկոն աւարտուեց թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի շնորհակալական խօսքերով՝ ուղղուած Հ.Հ. Սփիւռքի նախարարութեանը, Երեւանում Ի.Ի.Հ. դեսպանին եւ «Նոր Ջուղայի» օրեր ծրագրի բոլոր կազմակերպիչներին, որից յետոյ ձեռամբ Սրբազան Հօր եւ Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների յուշանուէրներ յանձնուեցին տկն. Հրանուշ Յակոբեանին եւ պրն. Մոհամմադ Ռեհսիին. փոխադարձաբար «Կոմիտաս» երգչախումբը Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան կողմից պարգեւատրուեց պատուոյ գրով:

Ի լրումն հանդիսութեան՝ Առնօ Բաբաջանեան համերգասրահի ճեմասրահում բացուել էր «Նոր Ջուղայի հայ համայնքն անցեալի եւ ներկայի խաչմերուկներում» խորագրով ցուցահանդէս, որտեղ ներկայացուած էին Նոր Ջուղայի տարազներ եւ հոգեւորականների զգեստների մասեր, ձեռարուեստի նմուշներ, Նոր Ջուղայի մասին հրատարակուած գրքեր, թերթեր եւ ամսագրեր: Տեղադրուած վահանակները ներկայացնում էին Նոր Ջուղայի կառոյցները, անցեալի կենցաղը եւ նշանաւոր նոր-ջուղայեցիները լուսանկարներով եւ համապատասխան բացատրականներով:

Ցուցահանդէս այցելած ներկաներին տրւում էին տպագրւած թերթօններ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի եկեղեցու, թանգարանի եւ այլ կառոյցների մասին, որից հետագայում Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան կողմից տրամադրւելու են նաեւ սփիւռքի զանազան կրթօջախներին:

Յատկանշելի է, որ Հայաստանի զանազան հեռուստաընկերութիւններ անդրադարձ են ունեցել «Նոր Ջուղայի օրեր» ծրագրին եւ լուսաբանել են կազմակերպւած ձեռնարկները: Իսկ Հայաստան ժամանած թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը եւ պատւիրակութեան մի քանի անդամներ հարցազրոյցներ են տւել Հայաստանի Հանրային, Երկիր մեդիա եւ այլ հեռուստաընկերութիւններին, լուսաբանելով կազմակերպւած ծրագրերը, ինչպէս նաեւ Նոր Ջուղայի համայնքի իրավիճակը:

Վերոնշեալ հանդիսութիւններին մասնակցում էին Հ.Հ. Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը, Հ.Հ.-ում Ի.Ի.Հ.-ի արտակարգ եւ լիազօր դեսպան Մոհամմադ Ռեիսին, թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը, Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների եւ Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչներ, Նոր Ջուղայից ժամանած համայնքի անդամներ, ինչպէս նաեւ ներկայիս Հայաստանում բնակւող նախկին նոր-ջուղայեցիներ եւ այլ հիւրեր:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 99-ԱՄԵԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՊԱՐՍԻԿ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Հայոց Ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Նոր Ջուղայի յանձնախմբի կազմակերպած միջոցառումների շարանում երէկ՝ մայիսի 4-ի երեկոյեան ժամը 7:30-ին, հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում բազմաթիւ հրաւիրեալների ներկայութեամբ, տեղի ունեցաւ պարսիկ հայրենակիցների համար ամենամեայ կարգով անցկացուող ձեռնարկը, որին ներկայ էին Իրանի իսլ. խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր դոկտ. Կարէն Խանլարեանը, Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների եւ շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչները, Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ ճարտ. Ասառզադեգանը, Սպահանի Պետական համալսարանի Միջազգային յարաբերութիւնների բաժնի վարիչ դոկտ. Շահինը, համալսարանի դասախօս եւ հայկական մշակոյթի հարցերի գիտակ դոկտ. Հոջաթոլհաղ Հոսէյնին եւ այլ պարսիկ հարուիրեալներ:

Ծրագրի բացումը կատարուեց օրուայ հաղորդավար՝ Մեղրի Ղուկասեանի միջոցով, այնուհետեւ բանախօսութեամբ հանդէս եկաւ դոկտ. Կարէն Խանլարեանը, ով պատմական փաստերով ներկայացրեց Օսմանական Թուրքիայի կողմից ծրագրուած եւ իրականացուած Հայոց Ցեղասպանութիւնը եւ նոյն երկրի հերթական կառավարութիւնների կողմից մինչեւ այսօր Ցեղասպանութեան իրողութիւնը ժխտող քաղաքականութիւնը, դոկտ. Խանլարեանն իր խօսքում նշեց.- «...*Օսմանական Թուրքիայի ամենաակնառու քաղաքականութիւններից, հայաթափ եղած Հայաստանի նւաճումն էր, որի իրականացումը սկսեց Սուլթան Համիդի միջոցով*...», իսկ շարունակութեան մէջ կարեւորութեամբ անդրադարձաւ Իրանի իսլ. հանրապետութեան ժամանակի պետական այրերի կողմից Հայոց Ցեղասպանութեան դատապարտման խնդրին:

Միջոցառման ընթացքում արտայայտուեց նաեւ դոկտ. Հոջաթոլհաղէ Հոսէյնին, որը դատապարտելով 99 տարի առաջ Արեւմտահայաստանի հայութեան նկատմամբ գործադրած ցեղասպանութիւնը, կոչ արեց համաշխարհային շարժում առաջացնել նման անմարդկային արարքների կանխարգիլման համար:

Երեկոյի գեղարուեստական բաժնում ներկայացուեց Դէյւիդ Խերդեանի «Օտարութեան ճամբայ» վէպից բաժիններ, օժանդակութեամբ՝ տկն. Արմինէ Էլիազեանի եւ պրն. Դերենիկ Մելիքեանի, որն իրագործուեց Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» համոյթի միջոցով, «Կոմիտաս» երգչախմբի խմբավար՝ պրն. Արմէն Ամիրխանեանի համագործակցութեամբ, ղեկաւարութեամբ՝ տկն. Ռիմա Սիմոնեանի եւ օրդ. Կարին Տէր-Մարտիրոսեանի:

Ծրագրում Կարին Տ. Մարտիրոսեանը, Լեռնիկ Ծատուրեանը, Մհեր Պօղոսեանը եւ Արթուր Բաղրամեանը հատուածներ ներկայացրին այս վէպից, որի ընթացքում Պրնյք. Համիկ Ալէքսանդրեանի եւ Արբի Բաբումեանի նւագակցութեամբ հնչեցին դաշնամուրային կտորներ, իսկ Սամանէ Նաֆէյիի միջոցով՝ ջութակի կատարումներ: Մեներգերով հանդէս եկան՝ Մհեր Պօղոսեանը, Թանիա Մինասեանը եւ Լեւիկ Խաչատրեանը, նաեւ կատարուեցին պարային հատուածներ:

Ծրագրի աւարտին ներկաները հիւրասիրուեցին:

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՄԲ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՆՇՈՒԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 96-ԱՄԵԱԿԸ

Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման 96-ամեակը Նոր Ջուղայում հանդիսաւոր տօնախմբութեամբ նշուեց ուրբաթ, մայիսի 30-ի երեկոյեան, Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, ներկայութեամբ՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, հոգեւորականաց դասի, ազգային մարմինների եւ շրջանի Հայ դատի յանձնախմբի անդամների, հայոց ազգ. դպրոցների աշակերտութեան եւ պատասխանատուների, միութենականների ու հոծ թւով ժողովրդի:

Տօնակատարութեան պաշտօնական բաժնի մեկնարկը տրուեց հոգեւորականաց դասի միջոցով իրականացուող Հանրապետական մաղթանքով, ուր երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Ապա տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւնը, որն աւարտուեց Ն. Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամների միջոցով Հայաստանի եռագոյնի ծածանմամբ, եւ Իրանի Իսլ. ու Հայաստանի Հանրապետութիւնների հիմների յոտնկայս ունկնդրութեամբ:

Յաջորդիւ օրուան պատշաճ խօսքերով հանդէս եկաւ հանդիսավար Մանիա Ղուկասեանը, ապա Հ.Հ. հիմնադրման 96-ամեակի տօնակատարութեան Նոր Ջուղայի յանձնախմբի անունից՝ Մադլէն Ղարիբեանը: Յանձնախմբի խօսքում ասուած էր. «1918 *թւականի մայիսի 28-ին ծնունդ առած Հայաստանի Հանրապետութիւնը պսակն էր հայ ժողովրդի դարաւոր պայքարի: Այն ամենամեծ յեղափոխութիւնն էր, որ հայ ժողովուրդը կատարեց իր սրտում եւ գիտակցութեան մէջ՝ կերտուած կարմիր արիւնով, կապոյտ երկնքի տակ եւ նարնջագոյն բարեբեր հողի վրայ: Այս անկախութիւնը կապուած է նաեւ մեր վաղուայ անելիքների հետ: Պատմութիւնը միայն անցեալ չէ: Հայորդին պէտք չէ միայն պատմութիւն իմանայ, այլ նայելով անցեալին, պէտք է կարողանայ ուղղել իր ներկան ու ապագան*»:

Այնուհետեւ ամենամեայ շքերթ-տողանցքին մասնակցելով մայիսեան սխրագործ հերոսներին իրենց յարգանքի տուրքը մատուցեցին՝ թեմի ազգային մարմինները, շրջանի Հայ Դատի յանձնախումբը, հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնն ու անձնակազմը եւ միութիւնները:

Տօնակատարութեան շարունակութեան մէջ բանախօսութեամբ հանդէս եկաւ Վրէժ Շիրւանեանը: Նա իր ելոյթում պատմական փաստերի ներկայացմամբ, վեց հիմնական պատճառներ թւարկելով, Հայաստանի Հանրապետութեան կերտումը մեր պատմութեան ամենալուսաւոր էջը համարեց, որոնք էին՝

ա. Մայիս 28-ն ստրկութեան եւ գերութեան լուծը թոթափելու, ապրելու եւ գոյատեւելու մեր ժողովրդի կամքն է մարմնաւորում:

բ. Մայիս 28-ը արտացոլումն է մեր ժողովրդի միասնականութեան ոգու եւ

յարատեւ կուի գաղափարի:

գ. Մայիսի 28-ը հանդիսանում է յարատեւ կուի եւ սեփական ուժերին ապաւինելու լաւագոյն օրինակը:

դ. Մայիսի 28-ը հայ ժողովրդի ինքնահաստատման գրաւականն ու երաշխիքն էր ազգերի մեծ ընտանիքում:

ե. Մայիս 28-ը հանդիսանում է ոչ միայն անկախ, այլեւ միացեալ Հայաստանի կերտման հիմքը:

զ. Մայիսի 28-ով հիմք դրեցին նաեւ այսօրուայ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնները:

Ահա մի հատուածի մէջբերում սոյն դասախօսութիւնից.

*«Թուրքը ցեղասպանական իր ծրագիրն ամբողջացնելու նպատակով՝ արշաւեց նաեւ Արեւելահայաստանի վրայ՝ հայութեան մնացորդը բնաջնջելու եւ ընդմիշտ Հայաստանը հայաթափելու ու թրքացնելու քաղաքական իր երազին հասնելու կատաղութեամբ։ Սակայն այս անգամ հայ ժողովուրդն անձնատուր չեղաւ եւ հէնց այդ հնչակեանն ու դաշնակցականը, ազատականն ու պահպանողականը կարողացան յաղթել թշնամուն։ Հայ քաղաքական մտքի միասնականութիւնը, Արամ Մանուկեանի եւ Դաշնակցութեան յառաջապահ դերակատարութեամբ, իր ուժականութիւնն առաւելագոյնը կենսագործեց* 1918-*ի մայիս* 25-26-*ի յաղթանակներով։ Օրհասական այդ պահին ամբողջ հայ ժողովուրդն ընդառաջեց Արամի «Դէպի ճակատ» կոչին՝ դրսեւորելով միասնութեան ու միասնականութեան օրինակելի կեցուածք ու տրամադրուածութիւն։ Եւ համաժողովրդական հերոսամարտ մղուեց* 1918 *թւականի մայիսին Ղարաքիլիսայի, Բաշ Ապարանի եւ Սարդարապատի ճակատներում»*:

Բանախօսութիւնից յետոյ ներկաներին իր օրհնանքը տուեց հոգշ. Տ. Անահնա վրդ. Գուճանեանը: Հայր Սուրբը նախ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանի ողջոյնի խօսքը փոխանցեց բոլորին, ապա գնահատելով բովանդակալից բանախօսական ելոյթը, այսպէս շարունակեց. *«Մայիս 28-ի հերոսները, Արամ Մանուկեանի առաջնորդութեամբ՝ որպէս երկրի վրայ Քրիստոսի օրինակներ, այս անգամ մարդուն ազատ ապրելու եւ հայրենիքի անկախութիւնը վայելելու իրաւունքը տուեցին։ Մայիս 28-ի ոգին ու խորհուրդը մեզ պատգամում է, թէ մենք այն ժողովուրդն ենք, ով կարող է հասնել իր նպատակին եւ կարող է վայելել հայրենիքի փառքը, պատիւը, սէրը եւ յարգանքը»*:

Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ աւելացրեց. *«Վստահ եմ Հայաստանի անկախութեան սերմնացան Արամ Մանուկեանն այն սերմն է ցանել մեզանից իւրաքանչիւրի մէջ, որով ոչ մի ժամանակ նահանջ չենք ճանաչի, պարտութիւն չենք ճանաչի եւ յատկապէս ոչ մի ժամանակ մեր արդար իրաւունքները չենք յանձնի թշնամուն, քանզի մեզ մէջ կայ ազգային պահանջատիրութիւն, հայի նկարագիր, կամք, ոգի եւ գաղափար»*:

Տօնախմբութեան պաշտօնական բաժնից յետոյ Հայաստանից հրաւիրուած երգիչ Ներսիկ Իսպիրեանի եւ իրեն ընկերակցող երկու երաժիշտների միջոցով կատարուեցին ազգային-յեղափոխական երգեր, որոնք առաւել ոգեշնչեցին ներկաներին՝ բարձրացնելով նրանց տօնական տրամադրութիւնը, իսկ աւարտին տեղի ունեցաւ հրաւառութիւն:

Յատկանշական էր, որ «Ռուբէն» երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ տպագրուել եւ ժողովրդին էին բաժանուել գրքոյկներ, որտեղ հակիրճ կերպով ներկայացուել էր Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման պատմութիւնը:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՐ ԵՒ ՄԻԱՍՏԻԱԾԵԱՆ ԿՐՕՆՆԵՐԻ ԽՈՀԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Շաբաթ՝ 2014 թւականի մայիսի 31-ի առաւօտեան, Սպահանի նահանգապետարանի պատասխանատուների ընկերակցութեամբ, Ս. Ամենափրկչեան վանք այցելեցին Ամերիկայի միացեալ նահանգների Միաստուածեան կրօնների կրօնական խոհականների պատիրակութիւնը, որոնց շարքում էին Ա.Մ.Ն.-ի նախագահի հոգեւոր եւ կրօնական հարցերում խորհրդատուներ հոգեւորական դոկտ. Ժուլ Հանթերը եւ տկն. Բարբարա Վիլիամզ Սքինզը:

Պատիրակութեանը դիմաւորեցին հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Թեմական խորհրդի անդամ պրն. Վարուժ Մովսիսեանը եւ Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդաւերդեանը:

Խմբի անդամներն այցելելով Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցի հիացմունքով դիտեցին եկեղեցու որմնանկարներն ու շինութիւնը, ապա այցելեցին «Խաչատուր Կեսարացի»-ի անուան թանգարան, որտեղ տեղադրուած Հայոց ցեղասպանութեան տաղաւարը նրանց յատուկ ուշադրութեանն արժանացաւ:

Ծաղկեայ դահլիճում կայացած հանդիպման ընթացքում, Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը ողջոյնի եւ բարիգալստեան խօսք ուղղեց հիւրերին եւ իր ուրախութիւնը յայտնեց պատիրակութեան այցի համար: Նա ներկաներին ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց Սպահանի հայոց թեմի ազգային, կրօնական, մշակութային եւ հասարակական կեանքի վերաբերեալ, ինչպէս նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնում հայութեանն ընձեռուած առանձնայատուկ կարգավիճակի եւ իրաւունքների մասին, շեշտելով, որ Իրանը հանդիսանում է համակեցութեան եւ համագոյակցութեան օրինակելի երկիր, որտեղ զանազան կրօնական եւ ազգային փոքրամասնութիւններ ապրում են կողք-կողքի՝ եղբայրաբար եւ խաղաղութեամբ: Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան իրողութեանը եւ պատիրակութեան անդամներից խնդրեց սոյն հարցը բարձրաձայնել միջազգային ատեաններում եւ ջանքեր գործադրել, որպէսզի Ա.Մ.Ն.-ի պետութիւնը այն պաշտօնապէս ճանաչի:

Պրն. Վարուժ Մովսիսեանը Թեմական Խորհրդի անունից ողջունեց պատիրակութեան անդամների այցը եւ մաղթեց, որ շարունակական են լինելու միջազգային մակարդակի պատիրակութիւնների հետ յարաբերութիւններն ու նրանց այցելութիւնները:

Պատիրակութեան անդամները հերթաբար արտայայտելով՝ իրենց զօրակցութիւնն ու համակրանքը յայտնեցին հայ ժողովրդին ու Հայոց եկեղեցուն եւ խստիւ դատապարտեցին Թուրքիայի կողմից խաղաղութեան եւ մարդկային իրաւունքների ոտնահարման ուղղութեամբ կատարուած եւ իրագործուող բոլոր վայրագութիւնները: Նրանք յիշեցնելով, որ Թուրքիան այսօր եւս շարունակում է իր նախնիների ընթացքը՝ այս անգամ Սիրիայի ներքին խնդիրներում իր բացասական, խառնակիչ ու ահաբեկչական գործունէութիւնը ծաւալելով, շեշտեցին, որ նման հարցերի շուրջ անտարբեր չեն լինելու եւ հաստատակամ աշխատելու են աշխարհում խաղաղութիւն հաստատելու եւ իսլամ-քրիստոնեայ եղբայրական ու աստուածային սիրոյ օրինակով հաշտ ապրելու ուղղութեամբ:

Խօսք առնելով Ա.Մ.Ն.-ի նախագահի հոգեւոր հարցերում խորհրդատու հոգեւորական դոկտ. Ժուլ Հանթերը, շեշտեց, որ հարազատ թարգմանն են հանդիսանալու Իրանում տիրող իրավիճակի, նաեւ հետամուտ են լինելու Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործում:

Վերջում հիւրերն իրենց տպաւորութիւններն արտայայտեցին Ս. Ամենափրկչեան վանքի սքանչելի կառոյցի կապակցութեամբ:

Պաշտօնական հանդիպման աւարտին ներկաները աղօթք բարձրացրին առ Աստուած՝ աշխարհում խաղաղութեան հաստատման, Սիրիայում տիրող ծանր պայմանների վերացման եւ համայն մարդկութեան միջեւ խաղաղ համագոյակցութեան համար:

Վերջում Մեծ եղեռնի նահատակների յուշարձանի առջեւ հոգշ. Հայր Սուրբի հոգեհանգստեան աղօթքից յետոյ, հիւրերը հրաժեշտ տուեցին, թողնելով Ս. Ամենափրկչեան վանքը:

# ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ «ԱՐՓԱ» ՆԻԱԳԱԽՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ ԵՒ ԿԱՏԱՐՄԱՄԲ

Սիրիահայութեան օժանդակութեան Սպահանի Հայոց Թեմի յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ «Արփա» նւագախմբի կազմակերպմամբ ու կատարմամբ, հինգշաբթի եւ ուրբաթ՝ յունիսի 4-ին եւ 5-ին, Սպահանի «Ֆարշչեան» դահլիճում, իրականացուեց բարեսիրական համերգ ի նպաստ սիրիահայութեան օժանդակութեան ծրագրի:

Երկրորդ համերգին հայ եւ պարսիկ հանդիսատեսից բացի հրաւիրուել եւ ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ ճարտ. Ասարզադեգանը, թեմի ազգային մարմինների ու միութիւնների ներկայացուցիչները եւ մի շարք պարսիկ պաշտօնատարներ:

Համերգն սկիզբ առաւ Ռուբէն Գրիգորեանի ողջոյնի խօսքով, ով հակիրճ կերպով բացատրութիւն տուեց սիրիահայութեան դիմագրաւող դժուարութիւնների եւ սոյն համերգի կազմակերպման բարեսիրական նպատակի մասին: Այնուհետեւ ներկայացնելով «Արփա» նւագախմբի ղեկավար դոկտ. Արբի Բաբումեանի կենսագրականը, հանդիսատեսին ծանօթացրեց օրուայ գեղարուեստական կատարողներին, ըստ հետեւեալի՝

Մեներգիչ՝ Ֆարիդ Ֆարոխփուր, նւագիչներ՝ Ժիրայր Ղարիբեան, Ասպետ Սիմոնեան, Էդօ Ղազարեան, Սարօ Ղարախանեան, Ռաֆֆի Խուդաբախշեան, Արին Խաչիկեան, Կարէն Իւնիկեան եւ Կարէն Օհանեան:

Իրենց նիւթական օժանդակութեամբ համերգը հովանաւորել են՝ «Բոխար սանաթ Սէփահան» ընկերութիւնը, «MAD» ստուդիան եւ «Նաքիսա» երաժշտական գործիքների վաճառքի կենտրոնը:

Համերգային ծրագրում ընդգրկուած էին ժամանակի փոփ աստղերի պարսկերէն աշխոյժ եւ գեղեցիկ երգեր, որոնց մեծ խանդավառութեամբ ունկնդրեց հանդիսատեսը, իսկ դրանց սերնդակից ներկաների մօտ արթնացաւ յուզիչ եւ անմոռանալի յուշեր:

## Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՋՈՀԵՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՅԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԶԱՐԴՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Շորեքշաբթի՝ յունիսի 18-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի հրաւէրով հանդիպում կայացաւ Պատգամաւորական ժողովի, Կրօնական ու Թեմական խորհուրդների, Հաշուեքննիչ մարմնի, շրջանի Հայ դատի յանձնախմբի եւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական մարմնի անդամների ներկայութեամբ, ուր քննարկուեց Ս. Ամենափրկչեան վանքում 1975 թւականին կառուցուած Հայոց ցեղասպանութեան զոհերի յուշարձանի յարակից տարածքի բարեզարդման նախագիծը:

Հանդիպմանը հրաւիրուել եւ ներկայ էին նաեւ նշուած նախագծի հեղինակ ճարտ. Մեղեդի Խուդաբախշեանը, Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի տնօրէն ճարտ. Շերլի Աւետեանը եւ շինարարական ոլորտում համայնքիս մի շարք մասնագէտներ:

Սկզբում Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը շնորհակալութիւն յայտնելով ներկաներին՝ հրաւէրին ընդառաջելու եւ հանդիպմանը ներկայանալու համար յայտնեց, որ արդէն երկու տարի է ինչ Ս.Ա. վանքում Հայոց ցեղասպանութեան յուշարձանի յարակից տարածքի, ինչպէս նաեւ թանգարանում Ցեղասպանութեան տաղաւարի բարեզարդման աշխատանքները Թեմական խորհրդի օրակարգի վրայ են գտնուում, սակայն խորհրդակցելով ազգային մարմինների հետ, նպատակայարմար է նկատուել աշխատանքն իրագործել 100-ամեակի ծրագրերի շրջագծում: Նա նշեց, որ նախագիծն ընդհանրութեան մէջ արդէն քննարկուել է Թեմական ու Կրօնական խորհուրդների եւ Պատգամաւորական ժողովի նիստերում, եւ այս ուղղութեամբ ստացուել է յուշարձանի հեղինակ ճարտ. Ալբերտ Աճեմեանի տեսակէտներն ու առաջարկները:

Այնուհետեւ նոր նախագծի հեղինակ՝ ճարտ. Մեղեդի Խուդաբախշեանը, անդրադառնալով նախագծին, նախ ներկայացրեց ներկայ դրուածքի առաւելութիւններն ու թերութիւնները, ապա մանրամասնօրէն բացատրեց մտայղացման պատճառները եւ իր առաջարկները՝ բոլոր անհրաժեշտ փոփոխութիւններով:

Հանդիպման շարունակութեան մէջ նախագծի առնչութեամբ հնչեցին հարցեր, որոնց մասնագիտօրէն պատասխանեց հեղինակը, իսկ ներկաներն արտայայտեցին իրենց տեսակէտներն ու կառուցողական առաջարկները՝ ծրագրի շրջագծում:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԻՒԹՈՎ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Սպահանի հայոց թեմի Բարեսիրական մարմինը նկատի առնելով այն փաստը, որ ապահովագրութեան կանոններից անտեղեակ լինելու պատճառով, յաճախ են դժուարութիւնների մատնւում համայնքի անդամները, նշած կանոնների մասին ժողովրդին իրազեկելու եւ այս առումով տեղեկութիւնները բարձրացնելու նպատակով, Թեմական խորհրդի հովանաւորութեամբ, հինգշաբթի՝ յունիսի 12-ի երեկոյեան ժամը 7-ին, Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում կազմակերպեց դասախօսական երեկոյ, որտեղ դասախօսութեամբ հանդէս եկան սոյն բնագաւառի մասնագէտներ՝ «Թամինէ Էջթեմայի» ապահովագրութեան կազմակերպութեան Սպահան քաղաքի 5-րդ մասնաճիւղի տնօրէն՝ Նեմաթօլլահէ Աքբարին եւ «Սաման» ապահովագրութեան ընկերութեան պատասխանատու-մասնագէտ՝ Արթին Քեշիշեանը:

Ծրագրի առաջին բաժնում, որին համայնքի անդամներից բացի հրաւիրուել եւ ներկայ էին քահանայից դասը եւ ազգային մարմինների, դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչները, ելոյթ ունեցաւ Նեմաթօլլահէ Աքբարին, որն անդրադարձաւ «Թաիմնէ Էջթէմայի» կազմակերպութեան ապահովագրութեան կանոններին՝ մասնաւորապէս բացատրելով բժշկական, հանգստի կոչուելու, անաշխատունակութեան, անգործութեան եւ ազատ աշխատանքների ու տնային տնտեսուհիների համար նախատեսւած ապահովագրութիւնների մասին:

Այնուհետեւ, ծրագրի շարունակութեան մէջ դասախօսեց Արթին Քեշիշեանը, ով պատմական ակնարկ նետելով Իրանում ապահովագրութեան ստեղծմանը՝ ներկաներին ծանօթացրեց ապահովագրութեան մասնաւոր ընկերութիւնների կողմից մատուցւող ծառայութիւններին՝ անհատի, ունեցւածքի եւ պատասխանատուութեան կապակցութեամբ՝ պատկան ենթաբաժանումներով:

Ծրագրի ընթացքում ներկաներն իրենց յուզող հարցերի պատասխաններն ստացան մասնագէտներից:

Երեկոն վարեց Նարբէ Ջարդն Դաւուդը:

## àôê²ÜàÔÜºðÆ¶Ü²Ð²îàôØ ê.²Ø°Ü² öðÎâº²Ü ì²ÜøàôØ

Երկուշաբթի՝ 12 մայիս 2014 թւականի երեկոյեան ժամը 7:30-ին, Ս.Ա. Վանքում, Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ 1392-93 ուսումնական տարեշրջանում Իրանի պետական համալսարաններ ընդունւած 6 գերլիսանսի մակարդակի գերազանցիկ ուսանողների գնահատանքի երեկոն:

Միջոցառմանը ներկայ էին թեմական առաջնորդը, Թեմական եւ Կրթական խորհուրդների անդամները եւ հրաւիրուած ուսանողները:

Ծրագրի ընթացքում հերթաբար Թեմական խորհրդի ատենապետը եւ թեմական առաջնորդը գնահատանքի խօսքեր ուղղեցին նորամուտ գերազանցիկ ուսանողներին, յուսալով, որ յետագային իրենց ներդրումը կունենան ազգային կեանքում, այնուհետեւ պարգեւատրեցին նրանք:

Ստորեւ ներկայացնում ենք գնահատւած ուսանողների ցանկը եւ ընդունւած ճիւղերը՝

Միգանուշ Սիմոնեան՝ բիոտեխնոլոգիա, Սպահանի պետական համալսարան

Սելին Ղարիբեան՝ մետալուրգիայի եւ նիւթագիտութեան ճարտարագիտութիւն, Թեհրանի գիտութեան եւ ճարտարուեստի համալսարան

Սերինէ Պարսամեան՝ տնտեսագիտութիւն, Սպահանի արուեստի համալսարան

Մհեր Օրոջեան՝ մեխանիկայի ճարտարագիտութիւն, Սպահանի ճարտարագիտական համալսարան

Նարեկ Խաչիկեան՝ գիւղատնտեսութեան ճարտարագիտութիւն, Սպահանի ճարտարագիտական համալսարան

Գեղարդ Թահմազեան՝ մարզական վարչագիտութիւն, Թեհրանի «Ալամէ Թաբաթաբայի» համալսարան

# ՏՕՆ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԻՐԱՊԻՑ ԵԼՆԵԼՈՒ

Շաբաթ՝ յունիսի 21-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ բազմաչարչար Հայրապետի վիրապից դուրս բերելու տօնին, թեմական առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ Կրօնական խորհրդի յատուկ կարգադրութեամբ, երեկոյեան ժամը 6:00-ին, նախագահութեամբ առաջնորդ Սրբազան Հօր, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, որի անւանակոչութեան տօնն էր միաժամանակ: Արարողութեանը ներկայ էին հոգեւորականաց ու դպրաց դասերը եւ համայնքի հաւատաւոր ժողովուրդը. ոչ միայն եկեղեցու սրահն էր մարդաշատ եւ լեցուն, այլ նաեւ եկեղեցու բակում բազմութիւն էր հաւաքուել: Պատարագիչն էր արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը, իսկ երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Յընթացս սուրբ Պատարագի, քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը՝ ներկայացնելով օրուայ խորհուրդը, շեշտելով լուսաւորչեան հաւատի առանձնայատկութիւններն ու զօրութիւնը, որը բացառիկ օրինակ պէտք է հանդիսանայ իւրաքանչիւր հայորդու, ինչը առաւել քան 1700 տարի ապահովել է հայ ժողովրդի գոյատեւումն ու երթը: Գերշ. Սրբազան Հայրն անդրադառնալով քրիստոնէութեան սուրբերի կրած նեղութիւններին, հալածանքներին, նախատինքին ու ատելութեանը, շեշտեց, որ դրանք ոչ միայն հաւատի տկարութեան պատճառ են դարձել, այլ աշխարհով մէկ մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի սուրբ Աւետարանը տարածելու եւ քարոզելու գրաւականն են հանդիսացել: Նա յորդորելով հաւատացեալ ժողովրդին՝ իրենց հաւատի մէջ ամուր եւ անվախ մնալու համար, կոչ ուղղեց բոլորին, որպէսզի այսուհետեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի վիրապից դուրս բերելու տօնն առաւել մեծ շուքով եւ հանդիսութեամբ տօնեն՝ Ս. Գէորգ եւ Ս. Սարգիս զօրավարների տօների օրինակով, քանի որ այն համարում է հայոց աշխարհի պետականօրէն քրիստոնէացման եւ հայոց եկեղեցու հաստատման եւ հիմնադրութեան պատճառը, իսկ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն՝ ինքը հանդիսանում է հայոց հաւատի հայրն ու Հայաստան աշխարհի երկրորդ լուսաւորիչը՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքեալներից յետոյ:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը, քահանայից եւ դպրաց դասերի եւ ներկայ ժողովրդի ուղեկցութեամբ, հայոց առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսաւորչի աջ-մասունքը վեր բարձրացրած թափօր դարձաւ եկեղեցու բակում եւ սրահում, այն մատուցելով հաւատաւոր ժողովրդին՝ համբուրելու եւ երկիւղածութեամբ յարգանքի տուրք մատուցելու բազմաչարչար հայրապետի սուրբ աճիւններին, ապա աջի օրհնութեամբ կատարուեց Զրօրհնէքի արարողութիւն եւ ջուրը բաժանուեց ներկաներին, որպէսզի այն, ինչպէս գերշ. Սրբազան Հայրն իր քարոզի մէջ անդրադարձաւ, լինի հիւանդութիւնների բժշկութիւն, ցաւերի փարատում եւ դժուարութիւնների վերացում:

Արարողութիւնից յետոյ, եկեղեցու բակում, Եկեղեցեաց Վարչութեան կարգադրութեամբ եւ երէցփոխի ու Տիկնանց յանձնախմբի ջանքերով կազմակերպուել էր հիւրասիրութիւն, որի ընթացքում ներկայացուեց գեղարուեստական կոկիկ մի յայտագիր՝ բաղկացած երգերից եւ ասմունքից: Սրտի խօսք ասաց արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը՝ գնահատելով տօնի առիթով աշխատած բոլոր անձանց, եւ ողջունեց հաւատացեալ ժողովրդի խուռներամ մասնակցութիւնը:

Վերջում գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն իր հայրական խօսքը փոխանցեց ուխտաւոր ներկաներին՝ ազգային-եկեղեցական կեանքում բազմամարդ եւ միասնական ներկայութեան կարեւորութիւնը շեշտելով, եւ յոյս յայտնեց, որ յաջորդ տարիներում տօնը նշելու է առաւել շուքով եւ հանդիսութեամբ:

# ՇՆՈՐՀԱՆԴԷՄ «ԿԱՔԱՒԻԿ» ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ ՏԵՍԱ-ԼՍՈՂԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՍԿԱՒԱՌԱԿՆԵՐԻ

Կաքաւիկ մանկական հանդէսի տնօրինութեան նախաձեռնութեամբ եւ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի հովանաւորութեամբ, 13 յունիս 2014 թւականին Հայ դատի կենտրոնատեղիի սրահում տեղի ունեցաւ «Օրօր ու Նանի» եւ «Մանկական տօնախաղը» տեսա-լսողական սկաւառակների շնորհանդէսը:

Միջոցառմանը ներկայ էին Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների, միութիւնների, դպրոցների ներկայացուցիչները եւ հրաւիրեալները:

Ծրագրի բացումը կատարեց օրուայ հաղորդավար՝ Թովմա սրկ. Գալստանեանը, որը ներկաներին ողջոյնի խօսքեր ուղղելուց յետոյ նշեց, որ քրիստոնէական դաստիարակութեան վերաբերեալ այս կարեւոր գաղափարի ներկայացնողը եղել է Կաքաւիկ մանկական հանդէսի տնօրէն՝ օրդ. Ժուլիեթ Դաւթեանը, հովանաւորութեամբ Սրբազան Հօր եւ Կրօնական խորհրդի, եւ Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի համագործակցութեամբ: Նա աւելացրեց, որ մեր համայնքում առաջինը համարուող ազգային եւ հոգեւոր բնոյթ կրող այս աշխատանքը, ծառայելու է մանուկ-պատանիներին, որպէսզի իրենց գիտակցութեան ձեւաւորման առաջին իսկ պահերից ստանան քրիստոնէական հայեցի դաստիարակութիւն:

Բացման խօսքից յետոյ բեմ հրաւիրուեց Կաքաւիկ մանկական հանդէսի տնօրէն՝ օրդ. Ժուլիեթ Դաւթեանը, ով հակիրճ կերպով ներկայացրեց Կաքաւիկ մանկական հանդէսի պատմական անցեալը, նշելով, որ այն մանկական աշխարհ է մուտք գործել 2010 թւականից Լոս Անջելեսում եւ ունեցել է բազմատեսակ ներկայացումներ ու հրատարակութիւններ: Սոյն հանդէսի առաքելութիւնն է հայ մատաղ սերնդին սովորեցնել հայոց լեզուն, հայկական սովորոյթներն ու աւանդոյթները, փոխանցել ազգային արժէքները, մանուկների ոգին լցնել հայ լինելու հպարտութեամբ եւ դա անել ամենամանկական, զւարճալի ու հետաքրքրաշարժ միջոցներով:

Այնուհետեւ օրդ. Դաւթեանը ներկայացրեց երկու տեսա-լսողական սկաւառակները:

«Օրօր ու Նանի» մանկական ձայնասկաւառակը իր մէջ է ընդգրկում մանկական Աստուածաշնչից վերցրած պատմութիւններ ու առակներ, որոնք ներկայացւում են մանկական ու մանուկին հաճելի ձեւերով, նրանց մէջ ներշնչելու քրիստոնէական դաստիարակութիւնն ու մարդկութեան բարի արժէքները:

«Մանկական տօնախաղը» ձայնասկաւառակը օգտագործելով ժամանակակից միջոցներն ու հետաքրքրութիւնները, մուլտֆիլմի ու խաղերի միջոցով հայ մանուկին ծանօթացնում է եկեղեցական-ազգային-պետական կարեւորագոյն տօներին եւ հայ մանուկ-պատանուն հոգեւոր դաստիարակութիւն է փոխանցում:

Օրդ. Դաւթեանն իր խօսքն աւարտեց շնորհակալական խօսք ուղղելով Սպահանի հայոց թեմի առաջնորդին, Կրօնական խորհրդին, համայնքի ազգային մարմիններին եւ անդամներին իրենց ցուցաբերած ջերմ համագործակցութեան առթիւ:

Ապա իւրաքանչիւր սկաւառակից ցուցադրուեցին որոշ բաժիններ, որոնք հաճելի ու գեղեցիկ տպաւորութիւն թողեցին ներկաների վրայ:

Յաջորդ բաժնում արտայայտուելով Կրօնական խորհրդի անդամ՝ պրն. Սաքօ Տէր Յովհաննիսեանը, օրդ. Դաւթեանին ուղղեց խորհրդի շնորհաւորանքի եւ քաջալերանքի խօսքերը եւ յայտնեց, որ ներկայ համաշխարհայնացման պայմաններում, երբ վտանգւած են մշակոյթն ու կրօնը, նման միջոցառումները եւ աշխատանքները ծառայելու են որպէս հայի ինքնութեան եւ արժէքների զարգացման միջոց:

Փակման խօսքն ասելու համար բեմ հրաւիրուեց առաջնորդ Սրբազան Հայրը: Նա իր արտայայտութիւնների մէջ իր հպարտութիւնը յայտնեց այս աշխատանքի իրագործման եւ նախաձեռնողի հետեւողականութեան առթիւ, անհրաժեշտ համարելով նման դաստիարակչական ծրագրերի շարունակականութիւնը: Վերջում գնահատանքի խօսք ուղղեց օրդ. Դաւթեանին, օրհնելով նրա կատարած գործը:

Հարկ է նշել, որ սոյն աշխատանքի իրագործմանն աջակցել են համայնքիս երիտասարդներ՝ տկն. Լեռնիկ Ծատուրեանը եւ պրնյք. Մհեր Պողոսեանն ու Դրօ Մարգարեանը:

Միջոցառման վերջին բաժնում «Կաքաւիկ»-ի մեղմ երաժշտութեան ներքոյ տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

# Øºì²ð²ÜøÆ ºðºÎàÚª ÜôÆðô²Ì §î²ðºòÜºðÆ î²ðô²Ü¦ Üàð æàôÔ²ÚàôØ

«Տարեցների տարեայ» նշման ձեռնարկների շարանում, ուրբաթ՝ յունիսի 22-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու շրջափակում տեղի ունեցաւ մեծարանքի երեկոյ: Ծրագիրը կազմակերպել էին Ս. Յովհաննու եկեղեցու Կանանց հոգեւոր լսարանի եւ «Շուշանիկ» երգչախմբի անդամուհիները: Բացման խօսքում, լսարանի եւ երգչախմբի ընդհանուր պատասխանատու արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը շնորհաւորելով հանդիսութեանը ներկայ տարեցներին, բնութագրեց մեծ մայրերի ու մեծ հայրերի նշանակալի դերը մեր կեանքում եւ ասաց, որ տարեցները մեր կեանքում ապրող ու շնչող կոթողներ են, ովքեր անցեալն ու ներկան կապակցում են իրար:

Բացման խօսքից յետոյ, Ալվարդ Զարգարեանն ընթերցեց Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գրքից մի հատուած, ապա արտայայտուեցին «Շուշանիկ» երգչախմբի ղեկավար Անուշ Յովհաննիսեանը եւ երէց անդամուհիներ:

Միջոցառման ընթացքում «Շուշանիկ» երգչախումբը ներկաներին ողջունեց «Հազար բարով էք եկել հիւրեր սիրելի» եւ «Նուբար, Նուբար» խմբերգերով, որոնց երգեհոնի կատարումով ընկերակցում էր խմբի ղեկավարը: Ասմունքով ու մեներգերով իրենց յարգանքը մատուցեցին Վեհանուշ Խուդաբախշեանը, Անասիկ Յովսէփեանը, Արեգա Յարութիւնեանը եւ խմբի անդամուհիներից, որոնց երգեհոնի կատարումով ընկերակցում էր Ալբերտ Ղազարեանը, իսկ սրկ. Զանի Ղազարեանն արտասանեց իր հեղինակած երգիծական ստեղծագործութիւնը, որը թէեւ ծիծաղաշարժ, սակայն նրա հիմքում ընկած էր այն դառն ու ցաւալի իրողութիւնները, որոնցով ապրում են անօգնական պապիկներն ու մամիկները:

Լսարանի անդամուհիների միջոցով կարկանդակը, գերշ. Սրաբազան Հօր հետ միասին կտրեցին համայնքի երէցներից, ապա յայտարարուեց ազատ բեմ, որտեղ իրենց սրտի խօսքով ու երգերի կատարումներովելոյթ ունեցան ներկաներից մի քանի հոգի:

Վերջում առաջնորդ Սրբազան Հայրն իր արտայայտութիւնների մէջ կարեւորելով «Տարեցների տարեայ» առթիւ նման միջոցառումների կազմակերպումը, գնահատանքի խօսք ուղղեց լսարանի ու երգչախմբի պատասխանատուներին ու անդամներին եւ ասաց. «*Տարեայ ընթացքում իւրաքանչիւր թեմում մեր սեւեռակէտը պէտք է լինի տարեցը։ Նրանք մեր սրբութիւններն են եւ մենք պարտականութիւն ունենք մտածել տարեցների մասին, մեծարել ու յարգել եւ մանաւանդ լսել նրանց խրատներն ու օգտուել նրանց փորձառութիւններից*»:

Աւարտին տարեցներին յանձնուեց մէկական վարդ, ովքեր իրենց ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեցին երաժշտութեան ներքոյ միասնական պարերով: Հանդիսութիւնը վարեց Վարդուհի Յովսէփեանը:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԵԶԱՐՓԱԿՈՒԵՑ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍՈՎ

Կիրակի, յունիսի 1-ին, երեխաների իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրը, երեկոյեան ժամը 7-ին, Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում իրագործուեց հանդիսաւոր ձեռնարկ՝ յագեցած աշակերտական ելոյթներով, որով եզարփակուեց Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի, տեսչութեան, ուսուցչական կազմի, Ծնողական խորհրդի եւ աշակերտների կատարած աշխատանքը՝ 2013-2014 թ. ուսումնական տարեշրջանի ընթացքում: Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ աշակերտների հարազատներ:

Ձեռնարկի մեկնարկը տրուեց դպրոցի տեսչուհի Քառոլին Դիլանչեանի ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով, ով իր արտայայտութեան մէջ յոյս յայտնեց, որ մանուկների պաշտպանութեան միջազգային օրը պատեհ առիթ է հանդիսանալու, որպէսզի բոլորը մի անգամ եւս մտածեն երեխաների նկատմամբ իրենց անելիքների մասին եւ այնպիսի միջավայր ստեղծեն նրանց համար, որտեղ մանուկներն առաւել կը զարգանան ու կը վայելեն իրենց գեղեցիկ մանկութիւնը:

Այնուհետեւ մեկնարկեց օրուայ գեղարուեստական բաժինը, ուր սկզբում բեմը տրամադրուեց մանկապարտէզի փոքր եւ մեծ խմբակների՝ Մանուշակագոյնի եւ Դեղինի սաներին, ովքեր ծաղիկների տեսքով գլխարկներ կրելով, ներկայացրին գարուն եղանակը՝ իր թարմութեամբ ու կենսունակութեամբ: Այն արարի ընթացքում Դեղին խմբակի սաները առանձնաբար բացատրեցին իրենց գլխարկին ամրացուած ծաղկի մասին, որից յետոյ միանալով Մանուշակագոյնի սաներին, գարնանը նուիրուած երգերի եւ արտասանութիւնների կատարումներով առաւել խանդավառութիւն պարգեւեցին ներկաներին:

Նախակրթարանի աշակերտները նոյնպէս իրենց գեղեցիկ կատարումներով հիացմունք պատճառեցին հանդիսատեսին: Սկզբում երեխաները պարային շարժումներով տեղաւորուեցին բեմում, ապա նրանցից իւրաքանչիւրը յայտնեց իր խօսքը՝ այբբենարանի եւ իր սովորած գիտելիքների մասին: Այն ներկայացումը, որը համեմուած էր հայրենասիրական եւ հայ գրերին նուիրուած երգերով ու արտասանութիւններով, աւանդոյթի համաձայն աւարտուեց «Հրաժեշտ այբբենարանին» երգով:

Ծրագրի երկրորդ բաժնում ձեռամբ՝ թեմական առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանի, Կրթական խորհրդի փոխատենապետ Արթին Քեշիշեանի, տեսչուհի Քառոլին Դիլանչեանի եւ պատկան ուսուցիչների տեղի ունեցաւ սաների վկայագրերի բաշխման արարողութիւնը:

Երեկոն եզրափակուեց առաջնորդ Սրբազան Հօր հայրական պատգամով: Տ. Բաբգէն եպս. Զարեանն սկզբում գնահատանքի խօսք ուղղելով թեմի Կրթական խորհրդին, մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեանը, ուսուցչական կազմին, Ծնողական խորհրդին եւ ծնողներին՝ դպրոցը բարձր մակարդակի վրայ պահելու համար՝ ծնողներին յորդորեց իրենց զաւակներին հայոց դպրոցներին վստահել եւ ասաց. «*Ձեր զաւակները հայոց դպրոցներում հայօրէն եւ հայեցի շունչով կը մեծանան: Նրանց մէջ կարթնանայ ու կը զօրանայ սէրը հայ ազգի, հայրենիքի եւ եկեղեցու նկատմամբ*»: Առաջնորդ Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին կարեւորելով մանկապարտէզ նախակրթարանի աշխատանքը, որպէս կրթութեան առաջին հանգրուան, ուր հիմք է դրուում երեխաների ամբողջական եւ ճշմարիտ դաստիարակութիւնը, աւելացրեց, թէ այս դպրոցում երեխաներին հայեցի շունչ, ոգի եւ կրթութիւն սնուցելով՝ հիմք է դրուում վաղուայ առողջ սերունդի:

Յատկանշական է, որ ձեռնարկին զուգահեռ կազմակերպուել էր նաեւ երեխաների ձեռքի աշխատանքներից ցուցահանդէս:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 99-ԱՄԵԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՅԹ՝ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի տնօրինութեան եւ ուսուցչական կազմի, մայիսի 8-ի երեկոյեան «Ալենուշ Տէրեան» դահլիճում տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեանը նուիրուած ճարտասանութեան մրցոյթ՝ մասնակցութեամբ դպրոցի միջնակարգ օղակի աւարտական դասարանի աշակերտուհեան: Ծրագրին ներկայ էին՝ Ի.Ի.Հ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի եւ Ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Նոր Ջուղայի յանձնախմբի ներկայացուցիչները, դպրոցի ուսուցչական կազմը, ծնողները եւ աշակերտները: Մրցութեան իրաւարարական կազմի անդամներն էին՝ դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը եւ ուսուցչուհիներ՝ Սեդա ու Քառոլին Դիլանչեանները:

Ծրագրի բացումը կատարեց փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը, ով իր գոհունակութիւնը յայտնելով նման առիթով միմեանց դարձեալ հանդիպելու համար, յիշեց Սիրիայում ապրող մեր հայրենակիցներին, որոնք այսօր զրկուած են նման առիթներից: Նա իր ելոյթում հային հայ պահելը հայկական դպրոցի առաքելութիւնը համարեց եւ ասաց, որ դա հնարաւոր է միայն մայրենի լեզուն անաղարտ պահելով, ինչի համար էլ դպրոցի ուսուցչական կազմը բաւարար չնկատելով հայերէնի դասապահերը, տարուայ ընթացքում կազմակերպում է տարբեր մրցոյթներ եւ միջոցառումներ:

Մրցոյթին մասնակցում էին աւարտական դասարանի 18 աշակերտներից 11-ը, որոնց մասնակցութեան հերթականութիւնը ճշտուեց վիճակահանութեամբ: Մասնակիցների ներկայացրած նիւթերն էին՝ Վանայ Շիրուանեան՝ «Հայ Դատի հետապնդման գործընթացը երէկ եւ այսօր», Անիա Անդրիասեան՝ «Նոր Ջուղայի խաչքարները», Վեհանուշ Ծատուրեան՝ «Հայկական տարազ», Նինէ Մարկոսեան՝ «Սայեաթ Նովա», Նարինէ Զարգարեան՝ «Անի քաղաք», Մեղմիկ Ղազարեան՝ «Տիգրան Մեծ», Արփի Ակոն՝ «Մոնթէ Մելքոնեան», Անի Ակոն՝ «Մեր հրաշագեղ եւ աննկուն Արցախը», Անիա Կիրակոսեան՝ «Արշիլ Գորգի», Անդրիա Խաչատրեան՝ «Միջին Արեւելքի քաղաքական եւ տնտեսական ճգնաժամի պատճառները», Օդելիա Տէր Սուքիասեան՝ «Դիցաբանութիւն»:

Աշակերտական ելոյթների աւարտին արտայայտուեց պրն. Ռոբերտ Բեգլարեանը, իր ուրախութիւնը յայտնելով ծրագրին մասնակցելու համար եւ նշեց, որ երեկոն առաւել հետաքրքիր էր դարձրել նիւթերի բազմազանութիւնը, քանի որ ունկնդիրը չգիտէր թէ յաջորդիւ ի՞նչ է ներկայացուելու: Նա իր խօսքերում արտայայտելով, որ դպրոցի տնօրինութիւնը եւ ուսուցչական կազմը նման աշխատանքներով փորձում են ուսումնարանը նմանեցնել Լազարեան, Գէորգեան եւ այլ ճեմարանների, իր գոհունակութիւնը յայտնեց ծրագրի եւ ելոյթների կապակցութեամբ ու դիմելով աշակերտներին աւելացրեց, թէ ուսումնասիրութեան պատրաստման եւ ներկայացման ընթացքում առաջացած դժուարութիւնները կօգնեն իրենց առաւել ինքնավստահութիւն ձեռք բերել:

Ապա արտայայտուեց աւարտական դասարանի ուսուցչուհի եւ իրաւարար կազմի անդամ Քառոլին Դիլանչեանը, ով նշեց ներկայացումների ընդհանուր թերի եւ ուժեղ կողմերը եւ մրցոյթի առնչութեամբ մի շարք մանրամասնութիւններ: Արդիւնքում մրցոյթի հինգ լաւագոյնները ճանաչուեցին՝ Անդրիա Խաչատրեանի, Վանայ Շիրուանեանի, Մեղմիկ Ղազարեանի, Օդելիա Տէր Սուքիասեանի եւ Անի Ակոնի ելոյթները, իսկ որպէս լաւ ուսումնասիրութիւն յատուկ մրցանակի արժանացաւ Արփի Ակոնը:

Վերջում Ռոբերտ Բեգլարեանի, Կրթական խորհրդի ու Հայոց ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Նոր Ջուղայի յանձնախմբի ներկայացուցիչների եւ պատկան ուսուցչուհիների միջոցով մասնակիցներին շնորհուեցին գնահատագրեր եւ սկաւառակներ, իսկ դահլիճում ներկաներին առիթ տրուեց արտայայտուել միջոցառման կապակցութեամբ:

Երեկոն աւարտուեց դպրոցի Ծնողական խորհրդի կազմակերպած հիւրասիրութեամբ:

# «ՔԱՆԱՆԵԱՆ» ԱՂՋ. ԴՊՐՈՑԸ՝ «ԼԱՒԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ»

Ուսումնադաստիարակութեան նախարարութեան կողմից իրականացուող «Լաւագոյն դպրոց» ծրագրի շրջագծում իւրաքանչիւր ուսումնական տարեշրջանի ընթացքում լաւագոյն դպրոցների ճանաչման նպատակով՝ պատկան վերահսկիչները մանրամասն քննելով դպրոցների կրթական մակարդակը, յաջողութիւնները, հնարաւորութիւնները, արխիւները, աշխատանքային բնոյթը եւ վարչական տեւալները, «Լաւագոյն դպրոց» կոչումը շնորհում են սահմանափակ թւով դպրոցների: Նոր Ջուղայի հայոց ազգ. «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցը 1391-92 ուսումնական տարեշրջանում Սպահան քաղաքի ուսումնադաստիարակութեան հիմնարկի 3-րդ շրջանի մակարդակում «Լաւագոյն դպրոց» ճանաչելով՝ առաջին տեղը զբաղեցրեց միւս ուսումնարանների համեմատութեամբ, իսկ Սպահան նահանգի մակարդակում ութ լաւագոյն ուսումնարանների շարքում դասւեց: Այս բացառիկ յաջողութեան գնահատագիրը, որը վերջերս նահանգի ուսումնադաստիարակութեան գերատեսչութեան կողմից տրամադրւել էր դպրոցին, կիրակի, մայիսի 11-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում կազմակերպւած հանդիսութեան ընթացքում շնորհւեց դպրոցի պատասխանատուներին:

Երեկոն, որին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ, հայոց ազգային դպրոցների պատասխանատուներ, ծնողներ եւ «Քանանեան» դպրոցի աշակերտները, սկիզբ առաւ օրւայ հանդիսավար դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանի ողջոյնի խօսքով:

Բացման խօսքից յետոյ բեմ ներկայացան Հ.Հ. Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան միջոցով 2013 թւականի օգոստոսին կազմակերպւած Հայագիտական համահայկական 6-րդ օլիմպիադային եւ դրան զուգահեռ անցկացուող Հայ Առաքելական Եկեղեցու պատմութեան մրցոյթին մասնակցող «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց դպրոցների աշակերտները, ովքեր ներկաների հետ կիսւեցին իրենց յուշերով, ձեռքբերումներով, տպաւորութիւններով, ինչու չէ նաեւ յոյզերով: Հարկ է նշել, որ սոյն պատիւրակութեան 13 աշակերտները մրցելով օլիմպիադային մասնակցող ութ երկրներից եկած 150 աշակերտների հետ, ստացան 8 դիպլոմ եւ 22 պատւոգիր ու շնորհակալագիր՝ արդիւնքում ճանաչելով որպէս մրցոյթի յաղթող խումբը:

Ապա օլիմպիադային մասնակից աշակերտներ՝ Վանայ Շիրւանեանը, Շաղիկ Մատթէոսեանը, Նարէ Վարդանեանը, Մեղմիկ Ղազարեանը, Վանէ Թահմազեանը, Նազէ Ասատրեանը, Թանիա Մինասեանը, Փրենի Ղազարեանը, Արութին Ղեւոնդեանը, Անի Ղազարեանը, Վահագն Վարդեւանը, Մեղրի Կարապետեանը եւ Շանթ Սարեանը ձեռամբ թեմական առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների ստացան իրենց դիպլոմներն ու պատւոգրերը, իսկ խմբին ղեկավարող ուսուցչուհիներ՝ Ռիմա Սիմոնեանին եւ Սեդա Դիլանչեանին Կրթական խորհրդի կողմից եւ «Կատարինեան» տղայոց դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի ու Ծնողական խորհրդի կողմից շնորհւեցին շնորհակալագրեր:

Միջոցառման շարունակութեան մէջ թեմի Կրթական խորհրդի անունից արտայայտւեց սոյն մարմնի փոխատենապետ Արթին Քեշիշեանը, որն իր խօսքում շնորհաւորելով Մայիսեան յաղթանակների՝ Շուշիի ազատագրման եւ Հայաստանի Առաջին Հարնրապետութեան 96-ամեակի առիթով, իր ուրախութիւնը յայտնեց, որ այսօր համահայկական միջոցառումների շնորհիւ նոր սերունդը կարողանում է Հայաստանում շփւել միւս հայրենակիցների հետ՝ նպաստելով Սփիւռք-հայրենիք յարաբերութիւնների առաւել սերտացմանը: Նա Վերջում աւելացրեց. «*Այս աշակերտների փայլուն յաջողութիւնն ապացոյցն է այն բանի, որ մեր դպրոցների աշխատանքը ճիշտ ուղղութեան վրայ է ընթանում եւ մեր դպրոցներում աշխատում են ազնիւ ու աշխատասէր անձնակազմ*»:

Այնուհետեւ «Քանանեան» դպրոցի Ծնողական

խորհրդի նախագահուհի Արմինէ Վարդանեանը շնորհակալական խօսք ուղղեց օլիմպիադային մասնակցող պատուիրակութեան ղեկավար ուսուցիչներին եւ Կրթական խորհրդին՝ աշակերտութեան մասնակցութիւնն ապահովելու եւ նրանց լաւապէս ուղղութիւն տալու համար, որից յետոյ Սպահան նահանգի ուսումնադաստիարակչութեան գերատեսչութեան կողմից պատրաստուած գնահատագիրը «Քանանեան» դպրոցի լաւագոյն դպրոց ճանաչելու կապակցութեամբ, ձեռամբ թեմական առաջնորդի շնորհուեց դպրոցի տեսչական կազմին՝ տեսչուհի տկն. Սալառիֆարին, փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանին, վերակացու տկն. Իռաւանիին եւ ուսուցչուհի Կարինէ Մինասեանին:

Օրհնեալ եզրափակիչ ելոյթը հանդիսացաւ թեմական առաջնորդ Սրբազան Հօր հայրական պատգամը: Տ. Բաբգէն եպս. Զարեանն իր ուրախութիւնը եւ հպարտութիւնը յայտնելով թեմի հայ դպրոցներում նման առողջ սերունդ դաստիարակելու կապակցութեամբ՝ աւելացրեց. «*Սփիւռքեան պայմաններում հայ դպրոցը փրկութեան փարոս է։ Մեր ժողովրդի զաւակների փրկութեան փարոսն է։ Մենք պէտք է զօրավիգ լինենք հայ դպրոցին, որպէսզի մեր զաւակներն այնտեղ առողջ մեծանան եւ հասակ առնեն, գինւեն ու հարստանան*»:

Թեմական առաջնորդն իր խօսքի շարունակութեան մէջ գնահատանքի խօսք ուղղելով Կրթական խորհրդին, տեսչութեանը, ուսուցչական կազմերին եւ ծնողներին՝ դպրոցների մակարդակի վերելքի ուղղութեամբ կատարած ջանքերի համար՝ ի մասնաւորի բարձր գնահատեց օլիմպիադայում մասանակից աշակերտութեան ու ղեկավար կազմի աշխատանքները եւ ասաց. «Հայ դպրոցն այսպիսի ոգի է ներշնչում իր զաւակներին, որպէսզի վաղը նրանք կարողանան իրենց ազգին, եկեղեցուն եւ հայրենիքին օգտակար հանդիսանան»:

Երեկոյի ընթացքում հնչեցին երգերի կենդանի կատարումներ աշակերտուհիներ՝ Վանայ Շիրանեանի եւ Թանիա Մինասեանի միջոցով, իսկ աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ դպրոցի Ծնողական խորհրդի կազմակերպութեամբ:

## «ԱՐՄԷՆ» ԵՐԿՍԵՌ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ ԵՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ - 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆ

**1- Նորարարութիւն.-** Դպրոցի առաջնից երրորդ դասարանի աշակերտները մասնակցել են նահանգի մակարդակում կազմակերպուած նորարարութեան մրցոյթին: «Արմէն» դպրոցի աշակերտ-ուհիները 1 րոպէն չգերազանցող ժամանակահատուածում պատրաստել են իրենց յատկացուած մասերը եւ արագաշարժութեան համար գնահատանքի են արժանացել:

**2- Ռոբոտիկ.-** Դպրոցի չորրորդ եւ հինգերորդ դասարանցիները տկն. Սիւնէ Մինասեանի եւ օր. Արինէ Մինասեանի պատասխանատուութեամբ, մասնակցել են նահանգի մակարդակում տեղի ունեցած մրցոյթին եւ նրանցից Վահագն Թահմազեանը, Թադէ Թահմազեանը եւ Մհեր Մինասեանը յաջողել են քայլող ռոբոտ պատրաստել, որը 11 վայրկեանում հատել է վերջնագիծը եւ առաջին հանդիսացել:

**3- Թատրոն.-** Չորրորդ դասարանի աղջիկները եւ տղաները մասնակցել են նահանգի մակարդակում կազմակերպուած թատրոնի մրցոյթին, ներկայացնելով երկու տարբեր բովանդակութեամբ բեմադրութիւններ: Մասնակից տղաները տկն. Միգանուշ Տէր Մարտիրոսեանի պատասխանատուութեամբ խմբական երկրորդ են հանդիսացել: Մասնակիցներն էին՝ Դաւիթ Յովհաննիսեանը, Փաթրիկ Ակոնը, Արթուր Քամարզարեանը, Լէօ Շահիջանեանը, Ժանօ Շահիջանեանը, Էմին Բաղումեանը, Վանասիս Դաւթեանը, Ադրիան Մինաս Խաչիկեանը, Արէն Բարսեղեանը եւ Արին Քեշիշեանը:

**4- Զարեռ Էրն Հայեան.-** Աշակերտները մասնակցելով մատնանշուած մրցոյթին, ներկայացրել են արուեստի գեղեցիկ նմուշներ: Սպահան նահանգի մակարդակում, երրորդ դասարանցիներ՝ Վիվիանա Միրզայեանսի եւ Սիսիան Մարկոսեանի, իսկ չորրորդ դասարանից Յասմիկ Տէր Մարտիրոսեանի ներկայացրածները յաղթել են: Նրանք նոր նմուշներով մրցելու են երկրի մակարդակում՝ տկն. Մառի Ղազարեանի պատասխանատուութեամբ:

**5- Վայելչագրութիւն.-** Գեղագրութեան ոլորտում անցկացուած մրցոյթների ընթացքում հինգերորդ դասարանցի Անի Սիմոնեանը առաջին, իսկ վեցերորդ դասարանցի Արսիս Յովհաննիսեանը երրորդ է հանդիսացել:

**6- Գծագրութիւն.-** Սոյն ասպարէզում վեցերորդ դասարանցի Տաթեւիկ Տէր Մարտիրոսեանը արձանագրել է աչքառու յաջողութիւն եւ առաջին է հանդիսացել:

**7- Նկարչութիւն-** Այս բնագաւառում հինգերորդ դասարանից Թադէ Թահմազեանը ընդգրկուել է ընտրանիում: Մանուկների միջազգային տօնին նուիրուած նկարչութեան մրցոյթին առաջին դասարանցի Արութին Ք. Օհանեանի նկարչութիւնը եւս նահանգի տարրական դպրոցների մակարդակում լաւագոյններից է հանդիսացել:

## Ü.æ.Ð²ÚØ.Ø.§²ð²ð²î¦ØÆàôÂº²Ü àôê²ÜàÔ²Î²ÜØÆ²ôàðÆì²ðâàôÂÆôÜÜ ÀÜ¸àôÜºòªÐ²Ø²ÚÜøÆ Üàð²Øàôî àôê²ÜàÔÜºðÆÜ

Մայիսի 2-ի առաւօտեան Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ուսանողական միաւորի վարչութիւնը, միութեան յարկի տակ ընդունեց ուսումնական ընթացիկ տարեշրջանում, բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում ընդունուած՝ Նոր Ջուղայի երիտասարդ-ուհիներին:



Ողջոյնի եւ բացման խօսքով ելոյթ ունեցաւ Ուսանողական միաւորի վարչութեան ներկայացուցիչ՝ Արինէ Մինասեանը, ապա ելոյթ ունեցաւ Կենտրոնական վարչութեան անդամ եւ միաւորի կապ՝ Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը: Նա շնորհաւորելով ուսանողների մուտքը համալսարան, մատնանշեց միաւորի աշխատանքային մի շարք ծրագրերին, որոնք առաջնորդւում են՝ ըստ միութեան կանոնադրութեամբ, ապա անդրադարձաւ հանդիպման նպատակներին, որից յետոյ խօսքը տրուեց միաւորի վարչութեանը, որի անունից ելոյթ ունեցաւ վարչութեան նախագահ՝ Նարբէյ Ջարդն-Դաւուդը: Նա եւս ողջունելով բոլորի ներկայութիւնը, անդրադարձաւ միաւորի պատմականին եւ ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց՝ միաւորի ներկայի կառոյցի ու աշխատանքների մասին եւ առաջարկեց ցանկութեան դէպքում նրանց անդամակցութիւնն ու համագործակցութիւնը միաւորի հետ:

Հանդիպման ընթացքում ցուցադրուեց՝ վերջին ժամանակաշրջանում միաւորի ծաւալած գործունէութիւնը ներկայացնող մի շարք լուսանկարներ: Վերջում, նորամուտ ուսանողներին, որպէս շնորհաւորանք, մէկական վարդ նուիրուեց: Հանդիպումն աւարտուեց խմբական լուսանկարուելով եւ համեստ ընդունելութեամբ:

Հանդիպմանը հրաւիրուած էին գերդիպլոմ, լիսանս, գերլիսանս եւ դոկտորայի մակարդակում ընդունուած՝ թւով 37 ուսանողներ:

Նշելի է, որ Ուսանողական միաւորն այժմ ունի 53 անդամ-ուհիներ:

## Ð²Úàò òºÔ²êä²ÜàôÂº²Ü 99-²Øº²ÎÆÜ ÜôÆðô²Ì îÔ²Úàò´²êÎºî´àÈÆ ÀÜÎºð²Î²Üø²è²ÎàÔØ2-ð¸ Øðò²Þ²ðÀªÜàð æàôÔ²ÚàôØ

Մայիսի 7-ի երեկոյեան, նախաձեռնութեամբ Հայոց ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Նոր Ջուղայի յանձնախմբի եւ համագործակցութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մարզական միաւորի, նոյն միութեան մարզասրահում, մեկնարկը տրուեց տղայոց բասկետբոլի ընկերական քառակողմ 2-րդ մրցաշարի, մասնակցութեամբ՝ «Արարատ» միութեան, «Ռահ-օ-թարաբարի», «Նեզամ մոհանդեսի» եւ «Խանէյէ բասկետբալ» վաստակաւոր խմբերի:

Խաղերի բացմանը ներկայ էին թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների եւ շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչները, մասնակից խմբերի պատասխանատուները եւ հայ ու պարսիկ հայրենակիցներ:

Սկզբում Սկաուտական միաւորի անդամների միջոցով տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, ապա հնչեց Իրանի իսլ. հանրապետութեան հիմնը՝ ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ: Բացման խօսք ասաց

*Շարունակութիւնը՝ 32-րդ էջում*

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ 6-ՐԴ ԽԱՂԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ուրբաթ՝ 20 Յունիս 2014 թւականի երեկոյեան, Հայ Մ. Մ. «Արարատ» Միութեան կենտրոնատեղիում, ներկայութեամբ «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտէ»-ի անդամներ՝ Պրնյք. Ալֆրէդ Հաւանի եւ Վանիկ Պետրոյեանի, ԻԻ Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր՝ Պրն. Ռոբերտ Բեգլարեանի եւ Թեմական Խորհրդի ու «Արարատ» Միութեան Կենտ. Վարչութեան ներկայացուցիչների տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում:

«Արարատ» Միութեան Կենտ. Վարչութեան նախագահ՝ Պրն. Մասիս Մինասեանի ողջոյնի եւ բարիգալստեան խօսքերից յետոյ, Պրն. Ալֆրէդ Հաւանը բացատրութիւններ փոխանցեց 2015 թւականին կայանալիք Համահայկական ամառային 6-րդ խաղերի վերաբերեալ, ընդ որում մատնանշեց, որ սոյն խաղերը նուիրուած են Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին, եւ որ նախկին 10 մարզաձեւերին աւելացել է եւս 7-ը:

Հանդիպման մասնակիցները կարեւորութեամբ շեշտեցին խաղերին բարձր մակարդակով եւ իրանահայութեան մեծաթիւ պատուիրակութեամբ ներկայութիւն ունենալու անհրաժեշտութիւնը եւ այդ ուղղութեամբ եղան համադրութիւններ:

Տեղեկացնում ենք, որ Համահայկական ամառային 6-րդ մարզախաղերը կանցկացուեն 2015 թւականի Օգոստոսի 2-ից 13-ը:

## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 99-ԱՄԵԱԿԻՆ ՆՒՐՈՒԱԾ ԲԱՆԱՎԷՃ

Հինգշաբթի, մայիսի 15-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, «Ռուբէն» երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ կայացաւ բանավէճ (Talk show)՝ «Ոչ մի զիջում, այս է գոչում սերունդն արթուն» խորագրով: Հայոց Ցեղասպանութեան 99-ամեակին նուիրուած սոյն ծրագրի սկզբում, փաստագրական տեսանիւթերի ցուցադրմամբ, Լեոնիկ Ղազարեանը պատմական ակնարկ ունեցաւ Հայոց ցեղասպանութեանը՝ անդրադառնալով նաեւ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին ու մինչեւ օրս Թուրքիայի պետութեան կողմից շարունակւող հակահայ քաղաքականութեանը, որից յետոյ ցուցադրուեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հետ վարած հարցազրոյը՝ Թուրքիայում հայկական եկեղեցապատկան կալուածների վերադարձման ուղղութեամբ զոյգ վեհափառ հայրապետների միասնական կոչի կապակցութեամբ:

Ծրագրի երկրորդ բաժնում, որը վարեց Լալագէ Իսաղուլեանը, բանավէճին մասնակցելու համար Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հայ երիտասարդներից հրաւիրուել էին՝ Արիս Դաւթեանը, Լեոնիկ Ծատուրեանը, Արինէ Մինասեանը, Նինելիա Աբրահամեանը, Գալօ Բաղդասարեանը եւ Վահէ Թահմազեանը, ովքեր պատասխանելով ներկայացուող հարցումներին, թէժ քննարկեցին Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին Թուրքիայի միջոցով առաւել թափով իրականացուող ժխտողական քաղաքականութիւնը եւ հատուցման շրջագծում համայն հայութեան՝ ի մասնաւորի երիտասարդութեան, անելիքները: Բանավէճին մասնակից դարձաւ նաեւ հանդիսատեսը:

Քննարկումների ընթացքում ցուցադրուեցին շրջանի Հայ դատի ներկայացուցիչ Աշոտ Դաւթեանի եւ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի հետ կատարած հարցազրոյցները՝ նշուած թեմաների առնչութեամբ: Ծրագրի աւարտին Հայոց ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Նոր Ջուղայի յանձնախմբի նախագահ Վահէ Թորոսեանի միջոցով Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի նախաձեռնութեամբ կազմակերպւած «Ցեղասպանութեան լռութիւն» թեմայով լուսանկարչական մրցոյթի մասնակիցներին շնորհուեցին գնահատագրեր, իսկ շահողին՝ Երանուշ Թահմազեանին, յուշանուէր:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ø²Úð°ðÆ îúÜÆÜ ÜôÆðô²Ì ØÆæàò²èàôØ

Երկուշաբթի, ապրիլի 7-ի երկոյեան, Հայուհեաց բարեգործական ընկերութեան յարկի տակ, անդամուհիների մասնակցութեամբ, իրականացուեց միջոցառում՝ նուիրուած Մայրերի տօնին:

Սկզբում բացման խօսքով եւ բարեմաղթանքներով ներկաներին ողջունեց ընկերութեան վարչութեան նախագահ Քառոլին Վարդանեանը, ապա հանդիսավարութեամբ ներկայացաւ Լիդա Վարդանեանը, ով նշեց. «***Այսօր բոլորից գերադասւում է մայրը, այն էակը, ով մեզ կեանք է պարգեւել, եւ իր անձն է զոհաբերել մեզ համար: Այն էակը, ով իր անվերապահ սիրով մեծ դեր ունի ժողովուրդների կեանքում***»:

Հանդիսավարի խօսքին յաջորդեց օրուայ բանախօս Հրանուշ Հայրապետեանի բնախօսական ելոյթը: Նա անդրադառնալով հայ մօր առաքելութեանը՝ կարեւորութեամբ նշեց նրա զոհաբերութիւնները եւ ասաց. «***Հայ մայրն իր անզուգական դերակատարութիւնն է ունեցել թէ ընտանեկան եւ թէ հասարակական կեանքում, որի վառ ապացոյցը կարելի է համարել աւելի քան 120 տարի անցեալ ունեցող Հայուհեաց Բարեգործական ընկերութեան անդամուհիների գործունէութիւնը, ովքեր ժամանակի դժուարին պայմաններում իրենց ընտանիքի բարօրութեան մասին մտահոգւելով հանդերձ, հոգ են տարել նաեւ համայնքի մասին՝ ձեռք մեկնելով որբերին եւ կարիքաւորներին***»: Բանախօսն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով պատմութեան մէջ յաւերժացած մայրերին՝ ի մասնաւորի Հայոց ցեղասպանութեան եւ Արցախեան ազատամարտի ընթացքում հայ մօր անձնազոհութիւններին, կոչ արեց, որ Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին մեր յարգանքի տուրքը մատուցենք նման մայրերի անմոռաց յիշատակին:

Ծրագիրը շարունակուեց ասմունքների կատարմամբ՝ ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամներ՝ Վանայ Զոհրաբեանի, Արեգա Ծատուրեանի, Վանէ Շահնազարեանի եւ Վանիա Պետրոսեանի միջոցով, որից յետոյ տեղի ունեցան խրախճանք, ներկաների կատարմամբ երգեր, ասմունքներ, բարեմաղթանքներ եւ զանազան մրցոյթներ: Վերջում Տարեցների տարուայ առթիւ գնահատուեցին ընկերութեան երիցագոյն անդամուհիները: Միջոցառումն աւարտուեց ընդունելութեամբ:

Ü.æ.Ð²ÚàôÐº²ò´²ð°¶àðÌ²Î²ÜÀÜÎ°ðàôÂ°²Ü
²Ü¸²ØàôÐÆÜ°ðÆ²ÚòÀÐ²Úàò²¼¶²ÚÆÜÌ°ð²Üàò
§î²ð°òÜ°ðÆî²ðô²Ú¦²èÂÆ

Երկուշաբթի՝ ապրիլի 21-ի երեկոյեան ժամը 4-ին, Նոր Ջուղայի Հայուհեայց բարեգործական ընկերութեան վարչութիւնն ընկերակցութեամբ նոյն միութեան Մայրերի օրուայ միջոցառման կազմակերպիչ յանձնախմբի անդամուհիների, «Տարեցների տարուայ» առթիւ եւ միեւնոյն ժամանակ Ս. Յարութեան տօնը շնորհաւորելու նպատակով, այցելեց հայոց ազգային ծերանոց՝ գեղեցիկ անկանկալներով երեկոյ տարեցներին նուիրելով:

Բարեգործական ընկերութեան անդամներին ջերմ դիմաւորեցին ծերանոցը ղեկավարող Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութեան՝ վարչութիւնն ու Տան յանձնախումբը: Նախ Կանանց գթութեան միութեան վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը բարի գալուստ մաղթելով հիւրերին՝ շնորհաւորեց Ս. Յարութեան տօնի կապակցութեամբ եւ աւելացրեց միութիւնը միշտ պատրաստ է նման ընդունելութիւնների, որովհետեւ տարեցներն արժանի են գնահատման: Նա վերջում կարեւորեց յատկապէս. «***Այսօրն սկսելու ենք այն յոյսով, որ ապագայում գոյգ միութիւններն կունենան սերտ համագործակցութիւն: Պէտք է համախմբուած աշխատենք, քանի որ մեր նպատակները նոյնն են***»:

Այնուհետեւ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան անունից իր խօսքն ուղղեց Լիդա Վարդանեանը, որտեղ ընթերցելով Ն.U.O.S.S. Արամ Ա Վեհափառ Հայրապետի «Տարեցների տարուայ» հոչակագրից հատուածներ, բացատրեց իրենց այցելութեան նպատակը եւ ուժ ու կորով մաղթեց ծերանոցի պա-

տասխանատուներին եւ Կանանց գթութեան միութեան վարչութեանը: Նա իր խօսքում աւելացրեց նաեւ. «***Այս օրը ձերն է սիրելի տարեցներ եւ մենք եկել ենք մեր յարգանքի տուրքը մատուցելու ձեզ: Միշտ եղէք առողջ ու երջանիկ, շրջապատուած ձեր սիրելիներով***»:

Բարեմաղթանքներից եւ օրւան պատշաճ արտայայտութիւններից յետոյ տկն. Վարդանեանը բացատրեց նաեւ սոյն այցի առիթով նախատեսւած ծրագրի կապակցութեամբ, որում ընդգրկւած էին՝ մրցութիւններ եւ գեղարւեստական ներկայացումներ:

Ծրագիրն սկսւեց հաւկթախաղով, որտեղ միմեանց հետ մրցեցեին տարեցներն ու միութեանականները: Այնուհետեւ գեղարւեստական բաժնում ասմունքեցին Բարեգործական ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիներ՝ Վանայ Զոհրաբեանը, Մեղրի Կարապետեանը, Նարեգա Սիմոնեանը եւ Վանիա Պետրոսեանը:

Վերջում Բարեգործական ընկերութեան կողմից ծերանոցի բնակիչներին նւիրւեցին ծաղիկներ, իսկ Կանանց Գթութեան միութեան վարչութիւնը, Բարեգործական ընկերութեանը նւիրեց «Հայ Ժողովրդական տարազներ» գիրքը:

## æ²ô²ÊøÆÜ ºôæ²ô²Êø²Ð²ÚàôÂº²ÜÜúÄ²Ü¸²Îº ÈàôÜä²î²Îàì ²ØºÜ²Øº²Ú´²ðºêÆð²Î²Ü¸²Þî²Ð²Ü¸¾ê

Նախաձեռնութեամբ Նոր Զուղայի Հայուհեաց բարեգործական ընկերութեան, ուրբաթ՝ յունիսի 27-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, տեղի ունեցաւ ամենամեայ կարգով կազմակերպւող բարեսիրական դաշտահանդէսը՝ Զաւախքին եւ ջաւախքահայութեանը օժանդակելու նպատակով:

Այս նպատակով կազմակերպւող դաշտահանդէսների աւանդոյթի համաձայն, ծրագրում ընդգրկւած էին բազմաթիւ անակնկալներ, ինչպիսին են անուշաբոյր ուտեստները, վիճակախաղը եւ փոքրերի ու մեծահասակների համար նախատեսւած զւարճալի խաղերն ու մրցոյթները: Խաղերի կրպակների շարանում աչքի էին ընկնում յատկապէս՝ մանկական բիլիարդը, թեփախաղը, սլաքախաղը եւ գիտելիքների մրցոյթի կրպակները:

Գեղեցիկ մտայղացում էր ջաւախքահայ կնոջ ու տղամարդու տարազով զգեստաւորւած երկու երիտասարդների միջոցով վիճակախաղի տոմսերի վաճառումը, ինչպէս նաեւ սեղանների վրայ տեղադրւած բացատրական թերթիկները՝ 2014 թւականին Զաւախքում կանգնեցւած Հայոց Ցեղասպանութեան յուշակոթող-խաչքարի վերաբերեալ:

Յատկանշական է, որ աշխատանքն իրականացւել էր համագործակցութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտ. վարչութեան:

## ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ՝ ԴԷՊԻ ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ՝ «ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՐԻԱՅ» ԱՌԻԹՈՎ

Անսալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հրչակագրին՝ 2014 թականը «Տարեցների տարի» հռչակելու կապակցութեամբ, Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութիւնը, որը երկար տարիներ ղեկավարելով տեղի հայոց ազգային ծերանոցը մեծ փորձ է կուտակել յատկապէս տարեցների համար գեղեցիկ ու հաճելի մթնոլորտ ստեղծելու գործում, այս անգամ սոյն տարին առաւել հանդիսաւոր նշելու նպատակով կեանքի է կոչել յանձնախումբ:

Կանանց Գթութեան միութեան Տարեցների տարւայ միջոցառումների կազմակերպիչ յանձնախումբն իր աշխատանքների մեկնարկը տուեց կիրակի, թւականիս մայիսի 18-ին, որտեղ Թանգարանների միջազգային օրւայ առթիւ անվճար շրջագայութիւն կազմակերպեց դէպի Սպահան քաղաքի «Զեհելսոթուն» պալատ եւ «Ծաղիկների այգի»՝ մասնակցութեամբ Նոր Ջուղայի եւ Շահինշահիր թաղ 33 հայ տարեցների: Շուրջ 4 ժամ տեւողութեամբ այս շրջագայութեան ընթացքում մասնակիցները ոչ միայն հնարաւորութիւն ունեցան մօտիկից ծանօթանալու նշուած վայրերին, այլեւ անմոռանալի պահեր վայելեցին միմեանց հետ շփւելով:

Յատկանշական է, որ սոյն յանձնախմբի կազմակերպութեամբ 2014 թականի ընթացքում տեղի են ունենալու նաեւ այլ միջոցառումներ, որոնք ընթացիկ տարւայ աւարտին եզրափակւելու են ամբողջովին տարեցների կատարումներով կազմակերպւած բուն երեկոյով:

## ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑԸ «ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏՆՕՐԷՆԻՆ

Շաբաթ, յունիսի 21-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան ներկայացուցիչները, ընկերակցութեամբ Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի քաղաքավարական այցով հանդիպեցին «Բարեկեցութիւն» կազմակերպութեան Սպահան նահանգի գերատեսչութեան նորանշանակ տնօրէն պրն. Սադեղիին, ուր շնորհաւորանքներ եւ բարեմաղթանքներ փոխանցելուց բացի, Կանանց գթութեան միութեան ներկայացուցիչները իրազեկեցին Նոր Ջուղայի Հայոց ազգային ծերնոցի հետ կապւած մի շարք դժւարութիւններ, որոնց լուծման համար նորանշանակ տնօրէնը խոստացաւ հնարաւորութեան սահմաններում աջակցել:

Հանդիպման ընթացքում պրն. Սադեղիին յատկապէս նշեց, թէ Ն.Ջ. Հայոց ազգային ծերանոցը Սպահան նահանգի լաւագոյն ծերանոցների շարանում է գտնւում՝ մաքրութեան, տարեցներին խնամելու, անձնակազմի յանձնառութեան եւ «Բարեկեցութիւն» կազմակերպութեան օրէնքների գործադրման առումով:

Սոյն այցելութիւնից յետոյ, Կանանց գթութեան միութեան վարչութեան անդամները ներկայանալով պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի գրասեանեակ, իրենց շնորհակալութիւնը յայտնեցին նրան՝ իր անվերապահ օժանդակութիւնների համար:

## ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՕՐՒԱՆ ՆՒԻՐՒԱԾ ՈՒՐԱԽ ԺԱՄԱՆՑ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Հինգշաբթի՝ 2014 թւականի մայիսի 1-ի երեկոյեան Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութիւնը միաւորների համագործակցութեամբ կազմակերպել էր «Աշխատաւորների օրւան» նւիրւած ուրախ ժամանց Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում: Ծրագրին իրենց ներկայութիւնն ունէին Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Հայ համայնքի վարչութեան անդամները եւ համայնքի անդամները:

Երեկոյի բացումը կատարեց միութեան վարչութեան անդամ տկն. Այիդա Մուրադեանը՝ շնորհաւորելով բոլոր աշխատաւորներին արժանի տօնի կապակցութեամբ: Նա խօսեց մայիս ամսւայ յաղթանակների մասին, ասելով, որ իւրաքանչիւր յաղթանակ ձեռք է բերւում համախմբւած պայքարով: Բացատրեց նաեւ, որ Մայիս 1-ի տօնը ուղղակիօրէն կապւած է մարդու իրաւունքի, ազատագրական մեծ շարժման եւ աշխատաւորների իրաւունքների պաշտպանութեան քաղաքական պայքարի հետ: Ապա հրաւիրեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանին՝ օրւայ առթիւ արտայայտւելու:

Հոգշ. Հայր Սուրբը շնորհաւորանքներ ուղղեց համայնքի բոլոր աշխատաւորներին, մաղթելով նրանց առողջութիւն, ուժ ու կորով, եւ գնահատեց «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեանը եւ ենթակայ միաւորներին՝ իրար հետ համագործակցելու, Մայիս 1-ի տօնը պատշաճօրէն նշելու, համայնքի աշխատաւորներին ուրախացնելու եւ համախմբելու համար:

Երեկոյի ուրախ մթնոլորտն ընդգրկեց նաեւ տղամարդկանց միջեւ երկու մրցութիւնների անցկացումը, առաջինը՝ պարան քաշելու մրցութիւնն էր, որին լրջօրէն մասնակցեցին ներկայ երիտասարդ եւ տարեց աշխատաւորները, իսկ երկրորդը՝ բազկամարտն էր, որոնք հերթաբար ունեցան իրենց արդար արդիւնքները եւ յաղթողները գնահատեցին նւէրներով:

Ծրագրի ամբողջ ընթացքում հնչեց հայկական մաքուր երգը եւ երաժշտութիւնը շնորհիւ Արութիւն Հախնազարեանի: Թէեւ հետզհետէ զօրացող քամին փչել սկսեց, սակայն երեկոն շարունակւեց ուրախ մթնոլորտում: Տեղի ունեցան նաեւ վիճակահանութիւն եւ ձեռքով ծանրութիւն կշռելու մրցումներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 96-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Երեքշաբթի՝ 2014 թւականի մայիսի 27-ի երեկոյեան, Հ.Հ. հիմնադրութեան 96-ամեակի առթիւ Շահինշահրի Յանձնախումբը, Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի բակում կազմակերպել էր գեղարւեստական ձեռնարկ:

Ծրագրին ներկայ էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, Շահինշահրի հայ համայնքի վարչութեան անդամները եւ ազգային ոգով առլեցուն հայորդիներ:

Սկզբում Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի Սկաուտական միաւորը ծրագրի բացումը կատարեց շքերթով եւ Հայաստանի

Հանրապետութեան դրօշակի ծածանման արարողութեամբ, որը տեղի ունեցաւ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի միջոցով Հանրապետական մաղթանքի եւ դրօշակի օրհնութեան արարողութիւնից յետոյ:

Դրօշակի արարողութեանը յաջորդեց օրուայ հաղորդավար օրդ. Թանգիկ Թորոսեանի միջոցով Յանձնախմբի խօսքի ընթերցումը, որով նա հակիրճ տողերով հանդիսատեսին փոխանցեց մայիսեան մեծ յաղթանակի պատմականը, ապա բեմը տրամադրեց Մարտիկ Յովհաննիսեանին:

Համայնքի արժանաւոր երիտասարդ երգիչն իր հայրենաշունչ ազգային, յեղափոխական եւ հայրենասիրական երգերով միասնութեան ոգի փոխանցեց ներկաներին, ովքեր ընկերակցեցին երգչին եւ իրենց ոգեւորութիւնն արտաբերեցին շուրջպարերով եւ ուրախութեան ծափողջոյններով:

Ծրագրի վերջում բեմ հրաւիրուեց արժն. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանը, ով իր հայրական խօսքը փոխանցեց ներկաներին՝ գնահատելով ծրագրի կազմակերպիչների աշխատանքը եւ շեշտելով մեր կեանքի մէջ մայիսեան յաղթանակի շունչն ու ոգին միշտ վառ ու հզօր պահելու կարեւորութիւնը, այն համարելով հայութեան գոյատեւման եւ ներկայի ու ապագայի յաղթանակների գրաւականն ու ներշնչանքի աղբիւրը:

Ձեռնարկի աւարտին բոլոր ներկաները վայելեցին Յանձնախմբի միջոցով պատրաստուած համեստ հիւրասիրութիւնը:

## §Ø²ÜàôÎÜºðÆ Ð²Ø²ÞÊ²ðÐ²ÚÆÜúð¦-À Þ²ÐÆÜÞ²ÐðàôØ

Կիրակի՝ 2014 թւականի յունիսի 1-ի երեկոյեան, նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի Մշակութային միաւորի, Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կազմակերպուել էր մանուկների համար ուրախ ժամանց «Մանուկների համաշխարհային օր»-ուայ առիթով:

Դահլիճում տիրում էր ուրախ մթնոլորտ, մանուկները պարում էին մանկական երաժշտութեան ներքոյ, այնտեղ ներկայ էին երկու ծաղրածուներ, որոնք փուչիկներ էին բաժանում մանուկներին եւ շոգեկառք կազմում: Ցուցադրւում էր նաեւ մանկական երգերի տեսահոլովակներ: Սրահում տեղադրուած էին զանազան խաղերի սեղաններ՝ հետաքրքրելով մանուկներին: Դրանց շարքում իր առանձին տեղն էր զբաղեցրել դիմայարդարման սեղանը, որի պատասխանատու օրդ. Նայիրի Շիրւանեանը սրահում ներկայ գրեթէ բոլոր երեխաների դէմքերը գունազարդեց տարբեր կերպարներով:

Ուրախ ժամանցն իր ընթացքն աւելի պաշտօնական կերպով շարունակեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, Հայ համայնքի վարչութեան եւ մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչների ներկայութեամբ: Հոգշ. Հայր Սուրբը շնորհաւորելով մանուկներին իրենց տօնի կապակցութեամբ, ցանկացաւ նրանց բոլորին յաջողութիւններով եւ ուրախութիւններով լի կեանք եւ ուրախ տօներ: Նա իր խօսքի մէջ շեշտեց մանուկների պէս մաքուր եւ անաղարտ հոգի ունենալու անհրաժեշտութիւնը եւ կարեւորելով այսօրուայ մանուկների եւ առհասարակ նոր սերնդի ճիշտ եւ հայեցի դաստիարակութիւնը, այն համարեց երաշխաւորուած վաղուայ եւ վառ ապագայի գրաւականը:

Հոգշ. Հայր Սուրբի խօսքերից յետոյ, երեխաներից ոմանք իրենց մանկական քաղցր ձայնով գեղեցիկ երգեր երգեցին, ապա Մշակութային միաւորի կողմից պատրաստուած երաժշտական խտասալիկներն ստացան հոգշ. Հայր Սուրբի ձեռքից, որպէս յուշանուէր:

# §î²ð°òÜ°ðÆ î²ðô²Ü¦ ÜôÆðô²Ì àôð²Ê Ä²Ø²Üò Þ²ÐÆÜÞ²ÐðàôØ

Ուրբաթ՝ 2014 թւականի յունիսի 13-ի առաւօտեան, «Տարեցների տարեայ» Շահինշահիրի յանձնախումբը, Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կազմակերպել էր միօրեայ ուրախ ժամանց՝ Շահինշահիրի տարեցների մասնակցութեամբ: Սոյն ծրագրին իրենց ներկայութիւնն ունէին Շահինշահիրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչները, համայնքի պատգամաւոր տկն. Այիդա Մուրադեանը եւ 65-ից վեր մեծ բազմութեամբ տարեցներ:

Ծրագրի բացումը կատարեց «Տարեցների տարեայ» Շահինշահիրի յանձնախմբի նախագահ պրն. Ռոբերթ Գորգին՝ բարի գալստեան խօսքով: Յանձնախմբի խօսքն ընթերցեց յանձնախմբի անդամ տկն. Սելինա Յովհաննիսեանը, մէջբերում կատարելով Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետի «Տարեցների տարեայ» առիթով հրապարակած հռչակագրից, որի մէջ ասւել է. «Իւրաքանչիւր ընտանիքի առաջնահերթ ու նիւրական պարտականութիւնը պէտք է լինի իր տարեց անդամների նկատմամբ անհրաժեշտ հոգածութիւն ցուցաբերելը եւ նոր սերնդի մօտ տարեցների նկատմամբ ունեցած յարգանքն ու սէրը աւելի խորացնելը: Անհրաժեշտ է նաեւ նիւթապէս սատարել գործող ծերանոցների եւ ընկերաբժշկական կենտրոնների գործունէութեանը՝ առաւել բարելաւելու եւ ծաւալելու իրենց մարդասիրական ծառայութիւնը եւ նոր ծրագրեր մշակել արդիական եւ մասնագիտական մօտեցումներով»:

Տկն. Յովհաննիսեանն իր խօսքերի աւարտին շնորհակալութիւն յայտնեց բոլոր հիւրերին եւ ներկաներին՝ յանձնախմբի հրաւէրին ընդառաջելու եւ ծրագրին մասնակցելու համար եւ բոլորին հրաւիրեց վայելելու իրենց համար նախատեսւած ծրագիրը:

Ծրագիրը շարունակւեց ջերմ մթնոլորտում՝ համայնքի տաղանդաւոր երիտասարդ Մարտիկ Յովհաննիսեանի քաղցր եւ սիրւած ձայնով եւ երաժշտական կատարումներով: Ապա տեղի ունեցան զանազան մրցութիւններ՝ կին եւ տղամարդ տարեցների մասնակցութեամբ, որոնց յաղթողներին յանձնախմբի կողմից նւէրներ յանձնւեցին:

Ծրագրի յաջորդ բաժնում տեղի ունեցաւ ճաշկերոյթ, սակայն հայկական ոչ մի ճաշի սեղան չի կարելի պատկերացնել առանց սեղանավարի. այդ պարտականութիւնն ստանձնեց պրն. Մելքոն Շիրւանեանը, որն իր հերթին շնորհաւորեց տարեցներին իրենց տարեայ առիթով եւ պատշաճ կերպով կատարեց իրեն վստահւած գործը: Սրտի խօսք ասաց հոգշ. Հայր Սուրբը եւ իր բարեմաղթանքները փոխանցեց ներկաներին: Ընթացքում, մասնակից տարեցների կողմից հնչեցին գեղեցիկ երգեր եւ արտասանութիւններ:

Ուրախ ժամանցը ջերմ մթնոլորտում շարունակւեց մինչեւ երեկոյեան ժամը 5-ը:

# ՇԱՀԻՆՇԱՀԻՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

## ԱՄԱՆՈՐԻ ՆԱԽՕՐԵԱԿ

2013 թւականի դեկտեմբերի 25-ի առաւօտեան ժամը 10-ին, Շահինշահիր Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի յարկի տակ տեղի ունեցաւ Ամանորեայ նախօրեակի հանդէսը: Մանուկներն իրենց մաքուր եւ անարատ մտածումներով անհամբեր սպասում էին Ձմեռ-պապի գալուն. մէկ տարի սպասելուց յետոյ, արդէն պէտք է հանդիպէին նրան եւ իրենց ուզած խաղալիքների մասին ասէին նրան, որպէսզի Ամանորի գիշերուան այն յայտնուի տօնածառի տակ:

Երբ Ձմեռ-պապը Ձիւնանուշիկի հետ ժամանեց դպրոց, սաները մեծ խանդավառութեամբ դիմաւորեցին նրանց իրենց դասարաններում եւ մտերմիկ զրոյց ունեցան Ձմեռ-պապի հետ եւ նրան ներկայացրին մինչ այդ օրն իրենց սովորածներից:

Քիչ անց, մանուկները, սպասւած հիւրերի հետ, դպրոցի մեծ սրահում ուրախ նւագներով եւ երգերով զւարճացան եւ պարեցին, որից յետոյ տեղի ունեցաւ նկարահանում Ձմեռ-պապի եւ Ձիւնանուշի բերած կարկանդակի մօտ:

Ծրագրի աւարտին սաներն ուրախ տրամադրութեամբ յաջողութիւն մաղթեցին Ձմեռ-պապին եւ Ձիւնանուշին, ովքեր մանուկներին խոստացան, որ դարձեալ այցի կը գան նրանց եւ նւէրներ կը բերեն:

## ԲՈՒՆ ԲԵՐԵԿԵՆԴԱՆ

«Բարեկենդան» նշանակում է բարի ապրելակերպ, որը լինում է Մեծ պահքին նախորդող կիրակի օրը: Այդ օրը մարդիկ պէտք է ուրախ խրախճանք կազմակերպեն՝ առատ ճաշատեսակներով, որը խորհրդանշում է մարդկութեան նախահօր եւ նախամօր՝ Ադամի եւ Եւայի դրախտային ապրած առատ կեանքը, որի յաջորդ օրւանից սկսելու են պահքի օրերը, որը լաւագոյն առիթն է ինքնաքննութեան եւ ինքնասրբագրման:

Ամէն տարւայ սովորութեան համաձայն, այս տարի եւս Շահինշահիր Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի Տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի ջանքերով տարազահանդէսով տօնւեց այս գեղեցիկ տօնը՝ չորեքշաբթի՝ 2014 թւականի փետրւարի 6-ի առաւօտեան: Բոլորն անհամբեր սպասում էին թէ դպրոցի սաներն ինչ տարազներով կը յայտնւեն: Նրանք իրար յաջորդելով ներկայացան գունաւոր եւ բազմատեսակ տարազներով՝ որոնք պատկերացնում էին չինացի աղջիկ, հրշէջներ, հարսներ, մկնիկ, թիթեռնիկներ, Սպունգ-բաբ, քոուբոյ եւ արքայադուստր:

Իւրաքանչիւր սան իր կերպարի մէջ երգեց, պարեց եւ ուրախացաւ:

Խրախճանքից յետոյ, Ծնողական խորհրդի դասա-

ւորումով հիւրասիրուեցին սաները եւ վերջում ստացան նոյն խորհրդի պատրաստած մրգերը, եւ դրական լիցքերով տուն գնացին:

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Շորեքշաբթի՝ փետրուարի 13-ի առաւօտեան Շահինշահիր Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանում, աւանդութեան համաձայն, տօնուեց Տեառնընդառաջը:

Այս խորհրդաւոր տօնի առիթով տեղի ունեցաւ հրավառութիւնը: Թուփը պատրաստուեց եւ վառուեց Ծնողական խորհրդի միջոցով: Սաներն անսահման ուրախութեամբ կրակի շուրջ դառնալով, իրենց ուսուցիչների հետ երգում էին ուրախ երգեր եւ անհամբեր սպասում էին թէ երբ են ցատկելու կրակի վրայից. ահա հասաւ սպասւած պահը եւ նրանց դաստիարակների օգնութեամբ սկսեցին կրակի վրայից ցատկել, որի պատճառով մեծապէս խանդավառուեցին:

Վերջում ստացան քաղցրաւենիքներ՝ գեղեցիկ փաթեթաւորումներով:

## ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆ

Շորեքշաբթի՝ 2014 թւականի ապրիլի 16-ի առաւօտեան Շահինշահիր հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ- նախակրթարանի յարկի ներքոյ տօնուեց հայ «Մայրերի օր»-ը:

Ծրագրին ներկայ էին Շահինշահիր հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչ տկն. Մառիթա Քեշիշեանը եւ սաների ծնողները: Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուհի տկն. Ալիս Մկրտչեանը՝ բարի գալուստ մաղթելով եւ շնորհաւորելով ծնողներին իրենց տօնի կապակցութեամբ: Նա իր խօսքի մէջ նշելով, որ մօր սէրն ու յարգանքն աշխարհում ամէն ինչից վեր է, շեշտեց, որ իւրաքանչիւր մարդ պէտք է նրան մեծարի ոչ միայն ապրիլի 7-ին, այլ՝ իր ամբողջ կեանքի ընթացքում:

Սաներն իրենց սրտից հնչած եւ մայրերին նուիրուած երգերով ու ասմունքներով մեծ ուրախութիւն եւ յուզմունք պատճառեցին իրենց ծնողներին:

Ծրագրի աւարտին ծնողները վայելեցին դպրոցի Ծնողական խորհրդի կողմից պատրաստուած հիւրասիրութիւնը եւ ստացան յուշանուէրներ:

## ԴՊՐՈՑԻ 20-ԱՄԵԱԿ

Շաբաթ՝ 2014 թւականի մայիսի 24-ի առաւօտեան Շահինշահիր հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի Տեսչութիւնը, ուսուցչական կազմը, Ծնողական խորհուրդը եւ դպրոցի սաներն ուրախ եւ մտերմիկ շրջանակում նշեցին իրենց դպրոցի 20-ամեակը: Նրանք նկարահանուեցին պատրաստուած կարկանդակի մօտ, ապա միասին փչեցին մոմերը, երգեցին, պարեցին եւ ուրախացան:

## ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Երկուշաբթի՝ 2014 թւականի մայիսի 26-ի երեկոյեան Շահինշահիր Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մեծ հանդիսութեամբ տեղի ունեցաւ «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի ամավերջի հանդէսը:

Ծրագրին ներկայ էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի փոխատենապետ պրն. Մուկուչ Աւետումեանը, Շահինշահիր հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչները եւ սաների ծնողներն ու հարազատները:

Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուհի տկն. Ալիս Մկրտչեանը՝ բարի գալուստ մաղթելով

ներկաներին: Նա իր խօսքի մէջ ասաց. «*Քիչ յետոյ սաները կը ներկայացնեն «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի 20-րդ ամավերջի ծրագիրը. 20 տարիներ անցել են մեր կրթօջախի ծառայութեան առաջին օրերից՝ եւ այսօր հպարտութեամբ ենք նայում մեր անցեալի աշակերտ-ուհիներին, ովքեր իրրեւ արժանի եւ գիտակից մարդիկ ծառայում են մեր համայնքում*»: Տկն. Մկրտչեանն իր երախտիքի խօսքը ուղղեց նաեւ ազգային իշխանութեանը՝ միշտ օժանդակելու եւ զօրավիգ հանդիսանալու կրթօջախին՝ խնդիրներն ու դժուարութիւնները վերացնելու համար, ապա բոլորին հրաւիրեց վայելելու սաների կողմից ներկայացուող հայրենաշունչ եւ հայկական մաքուր ոգի ներշնչող ձեռնարկը:

Սաները ներկայացան «Հայ զինուոր» եւ «Հայաստանի անուշ խաղող» երգերով, ապա հայկական տարազներ հագած՝ կատարեցին հայկական գեղեցիկ պարեր: Իրենց ծրագիրն աւարտեցին դարձեալ հայրենիքին նուիրուած միասնական խմբերգերով:

Յաջորդ բաժնում տեղի ունեցաւ 2013-2014 ուս. տարեշրջանի եւ Կիրակնօրեայ դպրոցի Սկսնակ բաժնի վկայականների բաշխումը եւ նկարահանում:

Վերջում իր օրհնանքի եւ գնահատանքի խօսքը փոխանցեց արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, կարեւորելով հայ դպրոցի դերն ու տեղը մեր երեխաների կեանքի մէջ: Նա գնահատեց դպրոցի Տեսչութեանը, ուսուցչական կազմին եւ Ծնողական խորհրդին՝ իրենց ստանձնած դժուարին պարտականութիւնը արդիւնքի հասցնելու համար եւ նրանց ցանկացաւ ուժ եւ կորով՝ իրենց նուիրական աշխատանքի եւ ընտանեկան կեանքի մէջ:

## ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՏԱՐՐԱԿԱՆ ԵՒ «ՄԱՍԻՍ» ՈՒՂԵՑՈՅՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Զորեքշաբթի՝ 2014 թւականի յունիսի 25-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցի սրահում կայացաւ վեցերորդ եւ երրորդ ուղեցոյցի շրջանաւարտների «Վերջին զանգ»-ի հանդիսութիւնը:

Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները, Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչները, սաների ծնողներն ու հարազատները:

Ծրագրի բացումը կատարուեց Հայոց դպրոցի վերակացու պրն. Զանիկ Թահմազեանի միջոցով, ով իր խօսքում ամփոփ կերպով զեկոյց ներկայացրեց ամբողջ տարուայ ընթացքում մարզական-մրցութային բնագաւառում սաների արձանագրած յաջողութիւնների եւ ձեռքբերումների, ինչպէս նաեւ շրջանաւարտ աշակերտների պետական միջնակարգ դպրոցների մուտքի քննութիւններում յաջողութեան մասին: Պրն. Թահմազեանը նաեւ ակնարկեց դպրոցում կազմակերպած ազգային տօնակատարութիւնների եւ ոգեկոչման միջոցառումների վերաբերեալ: Նա իր շնորհակալական խօսքն ուղղեց ազգային իշխանութեանը եւ Շահինշահրի հայ համայնքի վարչութեանը՝ դպրոցի շէնքի վերանորոգման եւ կարիքները հոգալու կապակ-

ցութեամբ եւ իր խօսքի աւարտին յոյս յայտնեց, որ դեռ երկար տարիներ պէտք է հայ դպրոցը շարունակի իր ծառայական աշխատանքը, անշուշտ ծնողների օժանդակութեամբ, եւ օրըստօրէ վերելք արձանագրի յատկապէս հայապահպանման ոլորտներում:

Ծրագրի գեղարուեստական բաժնում հանդէս եկան վեցերորդ դասարանի աշակերտ-ուհիներ Վանէ Օրոջեանը եւ Վաչէ Քեշիշեանը, ովքեր իբրեւ ծրագրի հաղորդավարներ, ընթերցեցին բարեմաղթանքների ջերմ խօսքեր: Նրանք ներկաների մօտ թարմացրին առաջին դասարանի առաջին օրերի յուշերը, ապա ներկայացրին վեցերորդ դասարանի սաներին, ովքեր կատարեցին մեներգեր, իսկ Արւին Մինասքանեանը հանդէս եկաւ նաեւ ջութակով մի կտոր երաժշտութեան կատարումով:

Յաջորդիւ բեմը տրամադրուեց երրորդ ուղեցոյցի սաներին, ովքեր իրենց հերթին ներկայացրին Վերջին զանգի առթիւ երգեր: Իբրեւ նորութիւն, ծրագրի ընթացքում առանձնապէս ներկայացան երրորդ ուղեցոյցի ասորի աշակերտուհիները, ովքեր իրենց լեզուով խօսք արտասանեցին եւ երգեր ներկայացրին Վերջին զանգին նուիրուած: Ծրագրի գեղարուեստական բաժնում իր նուագակցութեամբ սաներին ընկերակցում էր տկն. Աննա Դանիէլը:

Երգերի կատարումից յետոյ, շրջանաւարտ սաների շրթերից հնչեցին իրենց սրտի խօսքերը՝ հայոց դպրոցի ուսուցիչներին նուիրուած, որին յաջորդեց ուսուցիչների կողմից աշակերտներին ուղղուած բարեմաղթանքները: Յուզիչ էր պահը, երբ դեռ երէկուայ փոքր երեխաներն այսօր հասակ առած, շնորհալի պատանի եւ պարմանուհիներ դարձած, համարձակօրէն գովասանքի խօսքեր էին նուիրում իրենց դաստիարակներին:

Ծրագրի ամենահետաքրքիր պահերից եղաւ տեսանիւթի ցուցադրումը, որով վեցերորդի եւ երրորդ ուղեցոյցի սաների դպրոցական անցած ուղին ներկայացուում էր լուսանկարներով՝ գեղեցիկ երաժշտութեան ներքոյ. բոլորը կարծէք տեղափոխուեցին տարիներ առաջ, երբ օրուայ հերոսները տակաւին շատ փոքր էին, եւ մթնոլորտը ողողուեց անցեալի բարի ու հաճելի յուշերով:

Գեղարուեստական բաժինն աւարտուելուց յետոյ, դպրոցի ուսուցչուհիներից տկն. Վիոլետ Յարութիւնեանը շնորհակալական խօսքեր ուղղեց բոլոր աշխատող ուսուցիչ-ուհիներին, օրուայ ձայնի պատասխանատու պրնյք. Մարտիկ Յովհաննիսեանին եւ Արութին Հախնազարեանին, նաեւ մանկապարտէզ-նախակրթարանի ուսուցչական կազմին՝ իրենց տարիների տարած աշխատանքների համար, ապա բեմ հրաւիրուեցին գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը եւ ազգային մարմինների ներկայացուցիչները՝ սաների վկայականները յանձնելու համար:

Ծրագրին աւարտին իր հայրական խօսքն ու օրհնանքը փոխանցեց գերշ. Սրբազան Հայրը, ով խիստ կարեւորելով դպրոցական շրջանում նոր սերնդի ստացած դաստիարակութիւնը, յորդորեց շրջանաւարտ սաներին հայոց դպրոցում ներշնչուած ոգով ու գիտակցութեամբ շարունակեն իրենց ուսումնառական կեանքը եւ հայկական-քրիստոնէական բարձր գիտակցութեամբ կերտեն իրենց ապագան:

# ՅԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԱՆՀԱՄԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Հինգշաբթի՝ թւականիս յունիսի 26-ի երեկոյեան ժամը 8-ին, Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանի հովանաւորութեամբ եւ Համայնքին վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպւել էր յանձնախմբերի գնահատման երեկոյ: Այդ պատուոյ ցանկը ընդգրկում էր Համայնքի վարչութեան կողմից՝ 2013 եւ 2014 թւականներին կեանքի կոչւած բոլոր յանձնախմբերը: Հրաւիրեալների ցանկում իրենց ուրոյն տեղն էին գրաւել նաեւ Համայնքի վարչութեան կողքին աշխատող, նրա հետ համագործակցող յանձնառու անձինք:

Բարիգալստեան խօսքով, նաեւ հանդիսավարման դերում հանդէս եկաւ Վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Շիրւանեանը, ով բարձր գնահատելով յանձնախմբերի կարեւոր ու անժխտելի դերը համայնքի կենսունակութեան գործում՝ առաւել ուժ ու կորով ցանկացաւ նրանց: Յարգելի ատենապետը նաեւ հաղորդեց ներկաներին, որ հոգշ. Հայր Սուրբի ծննդեան օրւայ առիթով այդ ջերմ ու գեղեցիկ երեկոյի ընթացքում նախատեսւել է մի համեստ ու մտերմիկ տօնախմբութիւն: Իսկ ներկաների ուրախութեան առիթը կրկնապատկւեց, քանի որ նրանց առիթ ընձեռւեց շնորհաւորանքի խօսքով անձամբ ներկայանալ հոգշ. Հայր Սուրբին:

Նախատեսւած ջերմ ընդունելութեան ընթացքում, երեկոն առաւել համեմւեց ներկաների կողմից հնչած ժողովրդական եւ հայրենասիրական ուրախ երգ ու երաժշտութեամբ եւ յուզախառն ասմունք-արտայայտութիւններով:

Օրւայ հանդիսավարը համայնքի անունից երախտագիտութիւն յայտնեց Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանին եւ Ազգային իշխանութեան օրէնսդիր եւ գործադիր մարմիններին՝ համայնքիս հանդէպ ցուցաբերած հովանաւորութեան եւ բարեացակամութեան կապակցութեամբ:

Միջոցառման ընթացքում, իբրեւ Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների հայերէն բաժնի փոխտեսուչ արտայայտւելու հրաւիրւեց վաստակաւոր ուսուցիչ Զանիկ Թահմազեանը: Յարգարժան փոխտեսուչն եւս իրհերթին գոհունակութիւն յայտնելով համայնքում գործող բոլոր անձնակազմերի եւ ենթամարմինների միջեւ առկայ սերտ համագործակցութեան համար, յաջողութիւն մաղթեց բոլորին իրենց ազգանւէր աշխատանքներում:

Ծրագրի աւարտին, բեմ հրաւիրւեց հոգշ. Հայր Սուրբը, ով իր հայրական յորդորներում գնահատելով Համայնքի վարչութեան երկամեայ ծաւալած գործունէութիւնը եւ յանձնախմբերի իրագործած աշխատանքները, դրւատեց նաեւ ընդհանուր համայնքը՝ որպէս աշխոյժ ու կենսունակ համայնք, որը փայլում է իր կազմակերպւածութեամբ ու համերաշխութեամբ: Հոգշ. Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնելով թէ կազմակերպիչներին, թէ բոլոր ներկաներին իրենց մատուցած անակնկալի համար, օրհնանքով եզրափակեց իրխօսքը:

Այնուհետեւ բոլոր ներկաները մեկնեցին տուն՝ համոզւած լինելով, որ այս հաճելի միջոցառումը որպէս յիշարժան մի երեկոյ կը տպաւորւի իրենց յուշերում:

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2014 թւականի յունիսի 29-ին, Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ մատուցւած Ս. Պատարագի ընթացքում տեղի ունեցաւ Հայրապետական մաղթանք, Մեծի տանն Կիլիկիոյ արժանաւոր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 19-րդ տարեդարձի առիթով:

Կատարւող յատուկ արարողութեան ընթացքում դպրաց դասն ընթերցեց աւետարանական հատուածներ եւ կարդաց աղօթքներ՝ աստուածահաճոյ ծառայութիւն եւ երկար կեանք մաղթելով Վեհափառ Հայրապետին եւ անսասանութիւն՝ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսական սուրբ աթոռին:

Հոգշ. Հայր Սուրբը, Հայրապետական մաղթանքից յետոյ, «Քաջ Հովիւ» աւետարանական հատուածը բնաբան ունենալով, ամփոփ կերպով անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի բազմաբեղուն ծառայութեանը, ընդգծեց նրա ակնառու դերը Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին միջազգային ատեաններում ուշադրութեան կենտրոն դարձնելու կապակցութեամբ, որով բարեգութ Տիրոջ առաջնորդութեամբ եւ զօրութեամբ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին սպասարկել է համայն քրիստոնեայ աշխարհին՝ հոգեւոր եւ բարոյական մասունքանման արժէքները պահպանելու եւ զարկ տալու սրբազան գործում, ապա արեւշատութիւն մաղթեց Նորին Սրբութեանը եւ շնորհաւորեց նրան իր 19-ամեայ աստուածահաճոյ հովւապետական ծառայութեան առթիւ:

*Շարունակութիւն 19-րդ էջից*

Ð²Úàò ò°Ô²ê ä ²ÜàôÂ°²Ü 99-²Ø°²ÎÆÜ ÜôÆðô²Ì... Նարբէյ Զարդն Դաւուդը, ով շնորհակալական խօսք ուղղելով մասնակից խմբերին՝ հրաւէրին ընդառաջելու համար, անդրադարձաւ հայկական պահանջատիրութեանն ու յատկապէս վերջերս տեղի ունեցած Թուրքիայի ոտնձգութիւններին՝ Սիրիայի Քեսաբ հայաբնակ քաղաքի վրայ, այն համարելով Հայոց Ցեղասպանութիւնն իրագործողների անպատիժ մնալու հետեւանք: Այնուհետեւ մեկնարկեցին բասկետբոլի խաղերը եւ երեք էր տեւած խաղերի արդիւնքում մրցաշարի յաղթողը ճանաչւեց «Նեզամ մոհանդեսի» խումբը:

Վերջին խաղի աւարտին տեղի ունեցաւ փակման հանդիսութիւն, որտեղ իրաւարար կազմին եւ մասնակից խմբերի մարզիկներին շնորհեցին շնորհակալագրեր եւ յուշանուէրներ՝ Սպահանի հայոց Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտ. վարչութեան նախագահ Մասիս Մինասեանի եւ Հայոց ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի նախագահ Վահէ Թորոսեանի միջոցով:

# ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն**

***Ս. Յովհաննու եկեղեցի***

- 2,000,000 դրամ. Հրաչիկ, Սեւակ եւ Մելինա Սուքիազեաններ՝ Միքայէլ Միքայէլեանի յիշատակին:
- 300,000 դրամ. ոմն:

***Ս. Մինաս եկեղեցի***

- 200,000 դրամ. Հռիփսիկ Սիմոնեան՝ իր քրոջ՝ Օֆիկ Ղարախանեանի յիշատակին:

***Ս. Գէորգ եկեղեցի***

- 2,000,000 դրամ. Վարդուհի Յովսէփեան:
- 1,000,000-ական դրամ. Գայիանէ Գէորգեան, Էդուին Բահրամեան՝ Մատթէոս Իսաղուլեանի յիշատակին, Գառնիկ Շահիջանեան:
- 600,000 դրամ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու յանձնախմբի անդամուհիներ՝ Ոտնալայի առթիւ:
- 500,000-ական դրամ. Դիոն ու Անիթա Կարապետեաններ՝ եւ Ալէն ու Իզաբէլ Զարդն Դաւուդներ՝ Իշխանուհի Կարապետեան-Փուլադեանի յիշատակին, Գայիանէ Գէորգեան, Արթին Մեսրոպեան եւ Նինելիա Բաղդասարեան, Թաղլայի:
- 200,000 դրամ. Մուսաւ, Ռասայի:
- 160,000 դրամ. Արմինէ Հայրապետեան:
- 150,000 դրամ. Անուշ Ղարախանեան՝ Խաթունիկ Ղարախանեանի յիշատակին:
- 100,000-ական դրամ. Հիլդա Թահմազեան, Արգիշտի Մարգարեան՝ Ծաղկազարդի տօնի առթիւ, Մհեր եւ Էլենա Խանլարեաններ՝ Ծաղկազարդի տօնի առթիւ, Լիլիկ Քոչարեան՝ փոխան մատաղի:
- 80,000-ական դրամ. Փաժմ:
- 50,000-ական դրամ. Էլհամ Առին:

***Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի***

- 1,000,000-ական դրամ. Անայիս Ծատուրեան, Քնարիկ Յովհաննիսեան, Թադէ Գալստանեան՝ խաչքաւորութեան առթիւ:
- 200,000 դրամ. Մաքրուհի Յովսէփեան՝ եկեղեցու տօնի առթիւ:

***Հանգուցեալ Սահակ Աղասեանի յիշատակին***

- 200,000 դրամ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան:
- 100,000-ական դրամ. Արշալոյս Խուդավերդեան, Գարեգին Շահիջանեան, Սերոժ Խանլարեան, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ, Սուետ Ղարիբեան:
- 80,000-ական դրամ. Հրաչ Մինասեան, Համլեթ Մինասեան:
- 20,000 դրամ. Արուսեակ Աղաջանեան:

***Հանգուցեալ Ժուլիեթ Լալազարեան-Փանոսեանի յիշատակին***

- 500,000-ական դրամ. Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Ասպետ եւ Լորեթա Վարդանեաններ, Սեւակ եւ Արմինէ Խաչատրեաններ:
- 300,000-ական դրամ. Հայ ուս. Զհարմահալ միութիւն, Տիգրանուհի Ղեւեան, Սերժիկ Քեշիշեան, Տիգրան եւ Ռիմա Մկրտչեաններ:
- 200,000-ական դրամ. Սիրան Աւագեան, Արմէն եւ Մառիթա Մանսուրեաններ, Արա Ամրանեան, Արմոնդ Ալեքսանդրեան:
- 150,000-ական դրամ. Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ, Մարիամ Փանոսեան:
- 100,000-ական դրամ. Արեւիկ Ալլահվերդեան, Ժենիա եւ Սեւանա Մկրտչեաններ:
- 60,000 դրամ. Համազ Մարգարեան:

***Հանգուցեալ Էդուին Թորոսեանի յիշատակին***

- 150,000-ական դրամ. Մասիս Քեշիշեան, Սիմիկ Ղուկասեան:
- 100,000-ական դրամ. Ռազմիկ Բաղրամեան, Երուանդ Խաչիկեան, Երեմ Յարութիւնեան, Գարեգին Մարկոսեան:
- 50,000 դրամ. Ղուկաս Գրիգորեան:

***Հանգուցեալ Աշխարհուհի Խաչատրեանի յիշատակին***

- 500,000-ական դրամ. Շահինշահրի հայ համայնքի վարչութիւն, Վարդան Ալեքսանդրեան, Մարտիկ եւ Վայլեթ Ղիասեաններ, Համիկ եւ Արսինէ Ալեքսանդրեաններ, Հայրօ եւ Ժասմիկ Այւազեաններ:
- 300,000-ական դրամ. Արմոնդ Ալեքսանդրեան, Հրանդ եւ Լիդա Մարգարեաններ, Աննիկ Սիմոնեան:
- 200,000-ական դրամ. Անդրէ Յովհաննիսեան, Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ:
- 100,000-ական դրամ. Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ, Թաթուլ Օհանեան, Սերոժ եւ Շաքէ Խանլարեաններ, Լուսիկ Միրզախանեան, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ:

***Հանգուցեալ Արմանուշ Խաչակեանի յիշատակին***

- 600,000 դրամ. Արաքս ու Քլար Խաչաքեաններ:
- 200,000-ական դրամ. Արսէն Շահբազեան, Վազրիկ Մարկոսեան:
- 150,000 դրամ. Մինաս Թահմազեան:
- 100,000-ական դրամ. Աստղիկ Թահմազեան, Երանուշ Շահբազեան, Գուրգէն Թահմազեան, Զօրիկ Յարութիւնեան:
- 40,000 դրամ. Գոհար Քեշիշեան:

***Հանգուցեալ Սիլվարդ Յարութիւնեանի յիշատակին***

- 1,000,000 դրամ. Վարդան Յակոբեան:
- 500,000 դրամ. Ս.Ա. Վանքի տպարան:
- 300,000-ական դրամ. Ռուբէն Ղարիբեան, Արթին Դաւութեան, Արին Դաւութեան, Ալեքս Յովսէփեան:
- 200,000-ական դրամ. Արամիկ Ամրանեան, Վազրիկ Մարկոսեան:
- 150,000-ական դրամ. Անդրէ Փանոսեան, Մինաս Թահմազեան, Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ:
- 100,000-ական դրամ. Գոհար Քեշիշեան, Երուանդ Խաչիկեան, Հայկազ Պետրոսեան, Ծաղկուշ Աբէլեան, Անուշաւան եւ Հրանուշ Աղաբաբայեաններ:
- 50,000-ական դրամ. Վաչէ եւ Հերմինէ Խաչատրեաններ, Սամուէլ Ասատրեան, Խաթունիկ Յովսէփեան:

***Հանգուցեալ Մարթան Թահմազեան-Սահակեանի յիշատակին***

- 500,000 դրամ. Աբդալ եւ Էդուին Յովսէփեաններ:
- 400,000 դրամ. Մասիս Շահբազեան:
- 350,000 դրամ. Անի շէնքի բնակիչներ:
- 200,000-ական դրամ. Մինաս Թահմազեան, Ռազմիկ Գալստեան, Գէորգ Յովսէփեան:
- 150,000 դրամ. Արարատ Շահբազեան:
- 100,000-ական դրամ. Մասիս Յովհաննիսեան, Արեգ Ասլանեան, Թամար Գրիգորեան, Սուրէն Աւանէսեան, Ղազար եւ Արաքս Թահմազեաններ, Բաղդասար Շահբազեան, Հերմինէ Թահմազեան, Եղսօ Շահբազեան, Մանուէլ Սահակեան:
- 60,000 դրամ. Յարութ Բաղդասարեան:
- 50,000-ական դրամ. Կարօ Պօղոսեան, Ղուկաս Գրիգորեան:

***Հանգուցեալ Արեւիկ Մկրտչեան-Ղուկասեանի յիշատակին***

- 1,500,000 դրամ. Հրանուշ Քեշիշ-Ղուկասեան եւ Հենրիկ ու Հրանուշ Ծառուկեաններ:
- 1,000,000-ական դրամ. Սարօ, Արաքս եւ Սեւան Ղուկասեաններ, Էդուարդ, Ալիքա եւ Էնրիքօ Շահիջանեաններ:
- 350,000 դրամ. Անի շէնքի բնակիչներ:
- 300,000-ական դրամ. Զաւէն Սիմոնեան, Ասպետ եւ Լորեթա Վարդանեաններ:
- 200,000-ական դրամ. Հրաչ Մուրադեան, Շողիկ Վարդանեան:

- 100,000 դրամ. Աղաւնի Մարկոսեան:
- 70,000 դրամ. Յարութ Բաղդասարեան:
- 50,000 դրամ. Ղուկաս Գրիգորեան:

***Հանգուցեալ Աղաւնի Ղարիբեանի յիշատակին***

- 500,000 դրամ. Ժիրայր եւ Այիդա Ղարիբեաններ:
- 300,000 դրամ. Պարգեւ եւ Զարթիկ Բաբումեաններ:
- 200,000-ական դրամ. Գարեգին Մարկոսեան, Վարուժ Փանոսեան, Գալուստ եւ Ժենիկ Դիլանչեաններ:
- 150,000 դրամ. Հրաչիկ Ղարիբեան:

***Հանգուցեալ Սարօ Օրօջեանի յիշատակին***

- 350,000 դրամ. Անի Շէնքի բնակիչներ:
- 300,000 դրամ. Ասպետ Իսաղուլեան:
- 200,000 դրամ. Ռազմիկ եւ Ժանեթ Իւնիքեաններ:
- 100,000-ական դրամ. Ծաղկուշ Իսաղուլեան, Իշխան Թորոսեան, Գարեգին Մարկոսեան:

***Հանգուցեալ Յովհաննէս Այլահվերդեանի յիշատակին***

- 100,000 դրամ. Լուսի Մարտոյեան:

***Հանգուցեալ Մանուէլ Յարութիւնեանի յիշատակին***

- 200,000 դրամ. Վահիկ եւ Անէթ Փանոսեաններ:
- 100,000-ական դրամ. Կանանց հոգեւոր լսարան, Զանիկ Ղազարեան, Արտուշ եւ Մարգարիտ Սիրջանեաններ:
- 70,000 դրամ. Իշխան Թորոսեան:
- 50,000-ական դրամ. Անահիտ Սիրջանեան, Արուսեակ Աղաջանեան:

***Հանգուցեալ Ռուբէն Դաւթեանի յիշատակին***

- 500,000 դրամ. Ն.Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն:
- 100,000-ական դրամ. Եղիշ Թադէոսեան, Գասպար եւ Սալիկ Գասպարեաններ, Ժենիկ Յակոբեան:

***Հանգուցեալ Ծատուր Մանսուրեան յիշատակին***

- 200,000 դրամ. Սիփան եւ Լեռնիկ Ղազարեաններ:
- 100,000-ական դրամ. Համազասպ Մարգարեան, Հռիփսիկ Շահբալադեան, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ, Ֆրիդա Ալլահվերդեան, Հայկազ Ղազարեան, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ:
- 50,000 դրամ. Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ:

***Հանգուցեալ Յարութիւն Յովսէփեանի յիշատակին***

- 1,000,000 դրամ. Կարօ Յովսէփեան:
- 500,000-ական դրամ. Վրէժ եւ Սիլա Յովսէփեաններ, Զարեհ Փանոսեան:
- 300,000-ական դրամ. Սնկերտ գիւղի վարչութիւն, Վահիկ Յովհաննիսեան, Արա Թորոսեան, Վահիկ Փանոսեան:
- 200,000-ական դրամ. Յարութ Քեշիշեան, Ամրխան Ղազարեան, Խաչիկ Յովսէփեան, Մալուս Յովսէփեան, Արարատ Շահբազեան, Մասիս Խաչիկեան, Մասիս Շահբազեան, Ժիրայր Վարդանեան:
- 150,000-ական դրամ. Մինաս Թահմազեան, Մասիս Շահբազեան, Վազրիկ եւ Սիլա Մելքոմեաններ:
- 120,000 դրամ. Հայկազ Ղազարեան:
- 100,000-ական դրամ. Կանանց հոգեւոր լսարան, Գալստան Փանոսեան, Հայկազ Պետրոսեան, Խաչատուր Ղազարեան, Զաւէն Խաչիկեան, Եղսօ Շահբազեան, Ալբերթ Սահակեան, Սերոժ Աւանէսեան, Երուանդ Խաչիկեան, Ռոբերթ Պետրոսեան, Զօրիկ եւ Անահիտ Յովսէփեաններ, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ, Ժիլբերթ Ղազարեան:
- 50,000 դրամ. Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ, Հրաչ Մինասեան, Աննիկ Քեշիշեան, Մասիս Յովսէփեան:

***Հանգուցեալ Փիլիկ Սիմոնեանի յիշատակին***

- 500,000-ական դրամ. Ռէմոնդ եւ Ռուբինա Մերսոպեաններ, Աբրահամ եւ Ոլգա Մեսրոպեաններ, Սարմէն Պետրոսեան եւ Թելմա Սիմոնեան:
- 300,000-ական դրամ. Տիգրանուհի Ղեւեան, Վահիկ, Ռուբինա եւ Էդիկ Մարկոսեաններ, Հայդուկ եւ Լիդա Վարդեւանեաններ:
- 200,000-ական դրամ. Արեւիկ Ալլահուերդեան, Զանիկ Ղազարեան, Աննա Քեշիշեան, Արտուշ եւ Ֆրիդա Ղարիբեաններ, Մասիս Սիմոնեան, Սարօ Սիմոնեան:
- 120,000 դրամ. Ռաբերթ Ակոն:
- 100,000-ական դրամ. Գրիշ Թորոսեան, Սաքօ Շահիջանեան:

**Շահինդահրի հայ համայնքի վարչութիւն**

***«Սրբոց Վարդանանց» տօնի առթիւ***

- Մէկ գառ. Յունան Դեհրաշեան եւ Գառնիկ Թորոսեան՝ ընտանիքով:
- 3,000,000 դրամ. Ամարաս Թէյմուրեան:
- 1,000,000 դրամ. Տիգրանուհի Օրոջեան:
- 500,000-ական դրամ. Արգամ Նազարեան, Արգիշտի Նազարեան, Զանիկ Առաքելեան, Նոյեմ Բարֆեան, Մելքոն Շիրուանեան, Փիւնիկ եւ Թենի Յովսէփեաններ, Շահմիր Շահմիրզայեան, Ն.Զ. Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութիւն, Եղիա Թորոսեան:
- 400,000 դրամ. Արշամ Սէթ Աղայեան:
- 350,000 դրամ. Արմոնդ Բարֆեան:
- 300,000-ական դրամ. Մեսրոպ Առաքելեան, Մարիամ Դաւթեան՝ Վարդեր Շահբազեանի յիշատակին, Արփի Հայրապետեան, ոմն:
- 200,000-ական դրամ. Իւրիկ Մարկոսեան, Մառինա Շահմիրզայեան, Արարատ Մինասքանեան, Փերիշան եւ Ռաֆֆի Յակոբեաններ՝ Սարգիս Սահակեանի յիշատակին, Սուրիկ Բաբումեան, Ծաղիկ Բաբումեան՝ Թումաս Թահմազեանի յիշատակին, Բիւզանդ եւ Ժանէթ Բաբումեաններ, Արամ Բաբումեան, Մագթաղինա Խուդավերդեան:
- 150,000 դրամ. Արմոնդ Հախնազարեան:
- 100,000-ական դրամ. Նարէ Մարկոսեան, Անի Մարկոսեան, Լինա Մովսէսեան, Խաչիկ Խուդավերդեան, Մագի Յարութիւնեան, Անդրիաս եւ Շողիկ Քեշիշեաններ, Զանիկ Թահմազեան, Վարդան Փանոսեան, Զարթիկ Պօղոսեան:

**Սպահանի հայոց թեմի Բարեսիրական Մարմին**

***Կարիքաւորներին օժանդակելու նպատակով՝***

- 5,000,000-ական դրամ. Արիս Նադրեան՝ իր մօր Էլպիս Նադրեան-Զարգարեանի յիշատակին, Մոնիռէ Թողռայի:
- 1,000,000 դրամ. Հրաչիկ Ամրանեան:
- 500,000 դրամ. Ալվարդ Զարգարեան:

***Ս. Ծննդեան տօնին անխնամակալներին մատակարարուող տօնական ընթրիքի համար***

- 3,000,000-ական դրամ. Սեդա Այլազեան, Սիւնէ, Արին եւ Արինէ Մինասեաններ:
- 1,500,000 դրամ. Տիգրանուհի Մանսուրեան եւ Ադրինէ Ղեւեան:
- 1,000,000 դրամ. Քարմէն Ղեւեան:

***Ս. Յարութեան տօնին անխնամակալներին մատակարարուող տօնական ընթրիքի համար***

- 5,000,000 դրամ. Դիանա Խաչիկեան-Ղազարեան:
- 3,000,000 դրամ. Տիգրանուհի Մանսուրեան եւ Քարմէն Ղեւեան:

**«Տարեցների Տարայ» Շահինդահրի յանձնախումբ**

- 500,000-ական դրամ. Սամուել Խոսրովեան, Յովհաննէս Շմաւոնեան, Նոէլ Յովհաննիսեան, Սուլիկ Փանոսեան, Հենրիկ Հայրապետեան:
- 400,000 դրամ. Զանի Նոշադեան:
- 300,000-ական դրամ. Կարօ Գալստեան, Գրիշ Թորոսեան,

Արամ Բաբումեան, Շահէն Բաբումեան, Մանաս Աղախանեան, Հայկազ Խաչատրեան, Արուս Ղարախանեան, Լեւոն եւ Յասմիկ Մարկոսեաններ:

- 250,000 դրամ. Եսայի Բաղումեան:
- 200,000-ական դրամ. Բիւզանդ Բաբումեան, Փիլոսեան ընտանիք, Վարդուշ Հախնազարեան, Շահէն Մինասքանեան, Երեմ Յարութիւնեան, Գարեգին Դաւթեան, Ծաղկուշ Թորոսեան, Գառնիկ Անդրիասեան, Սալբի Խաչիկեան, Կարապետ Մինասեան, Փերիշան Յակոբեան, Արմենակ Թահմազեան, Իսաղուլեան ընտանիք, Վարդան Փանոսեան, Անդրիաս Քէշիշեան, Մասիս Շահբազեան, Աւետիք Փիլոսեան, Յարութ Խաչատրեան, Մովսէս Միրզախանեան, Մեսրոպ Այլազեան, Էլսիկ Սոհբաթեան:
- 150,000-ական դրամ. Արշամ Խուդավերդեան, Ստեփանեան ընտանիք, Ստեփան Թահմազեան, Թորոս Թորոսեան, Մկրտիչ Յարութիւնեան, Նոեմ Բարֆեան, Եղիա Միրզախանեան, Արծիկ Մելիքեան, Թադէոս Դաւթեան, Երանուհի Մանուկեան, Զարթիկ Սուքիասեան:
- 100,000-ակնա դրամ. Նազիկ Նազարեան, Այդա Աղամալեան, Մեսրոպ Առաքելեան, Ալբերտ Մինասքանեան, Եսթեր Զոհրաբեան, Յովհաննէս Թորոսեան, Եղսօ Թորոսեան, Մարիամ Մուրադեան, Բեգուլ Թորոսեան, Յովհաննէս Թահմազեան, Ալֆրեդ Թումանեան:
- 50,000 դրամ. Մարիամ Յակոբեան:

**Հայ ուս. Ջհարմահալ միութեան Ն.Ջ. մասնաճիւղ**

- 1,500,000 դրամ. Վաչէ եւ Նոռա Շահիջանեաններ՝ Լիդա Ներսիսեանի (Զան Ասլանեան) յիշատակին:
- 1,000,000 դրամ. Ասպետ Վարդանեան՝ Միհրանուշ Վարդանեանի յիշատակին:

***Մայրերի օր***

- 500,000-ական դրամ. Սիրանուշ Բաբումեան եւ Այլին Աբդալեան, Անժել Ղարախանեան, Մարօ Ղարախանեան:
- 300,000-ական դրամ. Արաքս Յարութիւնեան, Աննիկ Սիմոնեան:
- 250,000 դրամ. Մարօ Ծատուրեան:
- 200,000-ական դրամ. Սոնիա Միրզաբէկեան, Անուշ Օհանեան, Ծաղկուշ Խուդավերդեան, Արաքս Մարգարեան, Վրդանէս եւ Ռիթա Մկրտչեաններ:
- 150,000 դրամ. Սաթենիկ Միրզաբէկեան:
- 100000-ական դրամ. Սանդրա Խաչատրեան, Համասփիւռ Մարգարեան, Ովսաննա Ղարախանեան, Սոնիա Մկրտչեան, Արմինէ Խաչատրեան, Նուարդ Վարդանեան, Արծիկ Վարդանեան, Վարդուհի Ղարախանեան:

**Ն. Ջ. Հայոց գերեզմանատան բարեկարգման մարմին**

- 500,000-ական դրամ. Արարատ Փափէլեան, Լորեթա Միրզայեան՝ Մասիս Միրզայեանի յիշատակին, Պօղոս Թահմազեան՝ Արմենուհի Բաղդասարեանի յիշատակին, Ղազար Ղազարեան, Գառնիկ Զարգարեան, Վազրիկ Մարկոսեան, Սաքօ Յակոբեան, Տէր Մկրտչեան ընտանիք՝ Նուարդ Իսաղուլեանի յիշատակին, Վարդան Ալեքսանդրեան՝ Հիլդա Ալեքսանդրեան-Մարգարեանի յիշատակին, Վարդան Ալեքսանդրեան՝ Զաքար եւ Արփենիկ Մարգարեանների յիշատակին, Վարդան Ալեքսանդրեան՝ Տիգրան եւ Շուշան Ալեքսանդրեանների յիշատակին, Սուրէն Սէթ Աղայեան, Ֆրիդա Քեշիշեան, Սերժիկ Բաղրամեան, Հերոս Կարապետեան, Սուրէն Մինասեան:
- 300,000 դրամ. Վազրիկ Վարդանեան՝ Անուշ Վարդանեանի յիշատակին, Վարուժ Վարդանեան, Ժորժիկ Ղազարեան, Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան:
- 200,000-ական դրամ. Ալվարդ Զարգարեան, Յարութ Յակոբեան, Սարօ Ալումեան, Գարեգին Մարկոսեան, Յարօ Այլազեան, Մինաս Թահմազեան, Նորիկ Յարութիւնեան, Խաչատուր քհնյ. Զարգարեան:
- 120,000-ական դրամ. Ռազմիկ Գրիգորեան:
- 100,000-ական դրամ. Այլին Աբդալեան, Անդրանիկ Յակոբեան, Սեդա Այլազեան, Գալստան Փանոսեան, Սեւակ Թահմազեան, Վարուժ Ղարախանեան, Զանի Ղազարեան:

**Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանեան» դպրոց**

- 15,000,000 դրամ. Արամազդ Խաչեան:
- 10,000,000 դրամ. Դիանա Ղազարեան, ոմն:
- 5,000,000 դրամ. Կարօ Յովսէփեան:
- 1,500,000 դրամ. Արսէն Ղազարեան:
- 1,000,000 դրամ. Լալա Դիլանչեան:
- 500,000-ական դրամ. Ծաղկուշ Փաթաթանեան, Մարօ Թորոսեան, Յարութ Յակոբեան:

***Հանգուցեալ Կարօ Զաքարեանի յիշատակին***

- 500,000-ական դրամ. Յասմիկ եւ Զարեհ Քոչարեաններ, Անահիտ եւ Նարբէյ Քոչարեաններ:

***Հանգուցեալ Մարօ Բաղդասարեանի յիշատակին***

- 1,000,000 դրամ. Զեփիւռ եւ Մելքոն Մարտիրոսեաններ:
- 500,000 դրամ. Էլիզ Մարտիրոսեան:

***Հանգուցեալ Ռոբերտ Դովլաթեանի յիշատակին***

- 1,000,000 դրամ. Արփա Մարգարեան:

**Ծանր հիւանդների օժանդակող հիմնադրամ**

- 800,000 դրամ. «Քանանեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ՝ Ժորժ Մկրտչեանի յիշատակին:
- 500,000 դրամ. «Կատարինեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ՝ Ժորժ Մկրտչեանի յիշատակին:

**Փերիոյ կրթասիրաց միութիւն**

***Ամանորի հանդէսի առթիւ***

- 1,000,000-ական դրամ. Փերիոյ կրթ. միութեան Շահինշահի մասնաճիւղ, Հայկազ Պետրոսեան, Յայրօ Քեշիշեան, Բագրատ Սիմոնեան:
- 500,000-ական դրամ. Սոնիկ Կիրակոսեան, Քլար եւ Արփա Յարթիւնեաններ, Զանի եւ Թելլօ Պօղոսեան, Անդրանիկ եւ Սիրանուշ Ասատրեան, Յովհաննէս եւ Արուսեակ Ղազարեաններ, Սերժիկ Քեշիշեան, Հայկ Յովսէփեան, Վարուժան, Սոնիկ Բաղումեան, Սուրէն Սէթ-Աղայեան, Գարեգին Մարկոսեան:
- 400,000 դրամ. Անահիտ եւ Նարեկ Սիրջանեաններ:
- 300,000-ական դրամ. Եղիշ Վարդումեան, Մասիս Քեշիշեան, Գուրգէն եւ Մարիամ Թահմազեաններ, Արշամ Ղազարեան:
- 250,000-ական դրամ. Արտաշ Սիրջանեան, Լուսիկ Ասատրեան, Վարդգէս եւ Դորիս Պետրոսեաններ:
- 200,000-ական դրամ. Թորոս Ղազարեան, Խաչիկ Սահակեան, Արեւիկ Սահակեան, Արաիս Մկրտչեան, Սարօ Ծատուրեան, Պօղոս Յովսէփեան, Զաւէն Ղարիբեան, Վահան Իսախանեան, Մկրտիչ Մարկոսեան, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Մարի Ղազարեան, Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ:
- 150,000-ական դրամ. Սամսոն Զարգարեան, Առաքել Խուդավերդեան:
- 100,000-ական դրամ. Մուշեղ եւ Բալասան Ղարիբեան, Զանի եւ Հիլդա Օրոջեաններ, Անահիտ Իսմայիլեան, Աղանուր Մինասեան:
- 50,000 դրամ. Սուրէն Ղարիբեան:
- 40,000 դրամ. Երուանդ Պօղոսեան:
- 20,000 դրամ. Զաւէն Խաչիկեան:

***Մայրերի տօնի առթիւ***

- 1,000,000-ական դրամ. Փերիոյ կրթ. միութեան Շահինշահի մասնաճիւղ, Սերժիկ եւ Մարիթա Բաղրամեաններ, Ալէք եւ Անուշիկ Դիլանչեաններ, Յայրօ եւ Անահիտ Քեշիշեաններ, Հայկազ եւ Ովսաննա Պետրոսեաններ:

- 500,000-ական ռիալ. Բագրատ Սիմոնեան, Սերժիկ Քեշիշեան, Եղիշ եւ Նարդ Վարդումեաններ, Մարտիրոս եւ լուսիկ Յովսէփեաններ, Միքայէլ Զոհրաբեան, Զանի եւ Թելլո Պողոսեաններ, Սոնիկ Կիրակոսեան, Մինաս եւ Հրանուշ Թահմազեաններ, Խորէն Խուդավերդեան, Հայկ Յովսէփեան, Անդրանիկ եւ Սիրանուշ Ասատերան, Յովհաննէս եւ Արուսեակ Ղազարեաններ, Մասիս եւ Իշխանուհի Քեշիշեաններ, Ամիրխան եւ Ռուբինա եւ Վարդուհի Յովսէփեաններ:

- 400,000-ական ռիալ. Մաիս եւ Արեւիկ Յովսէփեան, Սոնիկ Նահապետեան, Գուրգէն եւ Մարիամ Թահմազեաններ, Հայկազ եւ Հրանուշ Ղարիբեաններ:

- 300,000-ական ռիալ. Վարդուշ Միրզախանեան, Արարատ Քեշիշեան, Անդրանիկ եւ Նազիկ Յակոբեաններ, Սոնիա Դիլանչեան, Հայրապետ եւ Քրիստ Ստեփանեաններ, Այիդա Ղարիբեան, Արտուշ եւ Մարգարիտ Սիրջանեաններ, Ալինէ Յարութիւնեան, տէր եւ տկն. Սիմոնեաններ, Կարօ եւ Քլար Ծատուրեաններ, Արտաշ եւ Խաչիկ, Արշամ եւ Վարդուշ Ղազարեաններ, Երուանդ եւ Վիոլեթ Թորոսեաններ, Տ. Խաչատուր քհնյ. եւ երէցկին Էլմա Զարգարեաններ, Հրաչ եւ Արմինէ Հայրապետեաններ:

- 250,000-ական ռիալ. Լուսիկ Ասատրեան, Գարեգին եւ Այիդա Մարկոսեաններ, Գուրգէն եւ Թէլլո Թահմազեաններ:

- 200,000-ական ռիալ. Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ, Այիդա Կիրակոսեան, Հրաչիկ Յովսէփեան, Գալստան եւ Վարդուհի Սիմոնեաններ, Մարալ Ղարիբեան, Առաքել եւ Խաթուն Խուդավերդեաններ, Աղանուր եւ Վարդուհի Մինասեաններ, Զաւէն եւ Հերիքնազ Խաչիկեաններ, Զանի եւ Հիլդա Օրոջեաններ, Յարութ եւ Քլար Յարութիւնեաններ, Անդրանիկ եւ Շուշիկ Ղազարեաններ, Միգանուշ Կարապետեան, Զաւէն եւ Վարդուհի Ղարիբեաններ:

- 150,000-ական ռիալ. Սամսոն Զարգարեան, տէր եւ տկն. Պարսամեաններ:

- 100,000 ռիալ. Անահիտ Իսմայիլեան:

- 60,000 ռիալ. Մուշեղ եւ Բալասան Ղարիբեաններ:

**Ն.Զ. Հայուհեայ Բարեգործական Ընկերութիւն**

- 5,250,000 ռիալ. Ռիմա Բէջանեան:

- 500,000-ական ռիալ. Ռէյհանէ Հաղիղի, Ժինուս Վազիոզադեհ:

- 300,000-ական ռիալ. Թադէոս Հայրապետեան՝ Թովմաս Ամիրխանեանի յիշատակին, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ՝ Միհրանուշ Կարապետեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի:

***Ամանորի սննդամթերքի համար***

- 500,000-ական ռիալ. Նարդ Կիրակոսեան, Լալա Հայրապետեան, Նուշին, ոմն:

- 300,000-ական ռիալ. Երան Բարդուղեան, Մագի Հայկունեան, Արգիշտի Ղարիբեան, Շիրակ Ղարիբեան:

- 100,000-ական ռիալ. Լորիկ Բաղդասարեան, Արաքս Հազարմալեան:

**Հայ Կանանց Գթութեան Միութիւն**

- 1,000,000 ռիալ. Արտեմիս Խաչեան:

- 500,000-ական ռիալ. Մառիկ Մինասեան, Վարսենիկ Օրոջեան:

***Հայոց ազգային ծերանոց***

- Մէկ օրուայ ճաշ՝ 1,500,000 ռիալ արժողութեամբ:

- Մէկ օրուայ հիւրասիրութիւն՝ 500,000 ռիալ արժողութեամբ

- Մէկ օրուայ ճաշ՝ 500,000 ռիալ արժողութեամբ. Ֆրիդա Ալլահվերդեան՝ իր սկեսրոջ մահուան առթիւ:

- Սնունդ. Սուրբ Սարգիս Եկեղեցու յանձնախումբ (մատաղի միս), Լորեթա Գալստեան, Մարիամ Մինասեան, Սիլա Միրզախանեան, Թելօ Թահմազեան, Ադրինէ Եաղուբեան, Էլմա Խաչեան, Եղսօ Անդրիասեան, Ժանեթ Իւնիկեան, Ռիմա Սարգսեան, Թագուշ Բաշիկեան (պասի հրուշակ), Պերճիկ Խուդավերդեան, Արուսեակ Ղազարեան, Մագի Յարութիւնեան, Արաքս Տէր-Մարտիրոսեան, Ադրինէ Եաղուբեան, Մանուշ Մանսուրեան, Արմենակ Ծատուրեան, Խորէն Թահմազեան՝ (մէկ օրուայ ճաշ), Սոնա Թումաթարեան (մէկ օրուայ ճաշ եւ պտուղ՝ Համբարձման տօնի առթիւ), Յովիկ Ղազարեան, Արմինէ Թորոսեան, Ռոզա Շահիջանեան, Հերմինէ Այլազեան, Ալվարդ Կարապետեան, դկտր. Աբթահի, Ահմադի, Մոմենի, Սոլէյման-զադեհ:

- 3,000,000 ռիալ. Լուսիկ Յակոբեան:

- 1,000,000-ական ռիալ. Ծաղկուշ Դաւթեան՝ քրոջ՝ Հրանուշ Փաթաթանեանի յիշատակին: Արմինէ Ասատրեան՝ մեծ մօր՝ Ծաղիկ Ասլանեանի յիշատակին, ոմն՝ Անուշ Բաղումեանի յիշատակին:

- 500,000 ռիալ. Լալա Հայրապետեան:

- 300,000-ական ռիալ Ռիմա Սարգսեան, Կարապետ Նահապետեան:

- Թէյի բաժակ (2 ձեռք). Ծաղիկ Բաբումեան:

- Նուէրներ Մայրերի տօնի առթիւ. Մարգարիտ Զարգարեան:

- Քաղցրաւենիք եւ անուշեղէն (Մայրերի տօնի առթիւ). Ն.Զ. Հայոց ազգային «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցի անձնակազմ եւ Ծնողական Խորհուրդներ

**Հայ դաստի Նոր Զուղայի յանձնախումբ**

- 1,000,000 ռիալ. Էլսիկ եւ Ադլին Ռոստամեաններ՝ Ժուլիեթ Լալազարեանի յիշատակին:

---

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչուող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Այլին Քեշիշեանը։*

*Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրում է պրն. Գեւիկ Խաչատրեանը։*


**ՄԵՐ ՀԱՍՑԷՆ**

خلیفه گری ارامنه جلفای اصفهان
و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com

**Tel: +98–311–6243471-2**
**Fax: +98–311–6270999**

# Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

## ԵՈՐ ՁՈՒՂԱ